


ՄԲ. ՆՇԱՆ ՄԲ. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԵԿԵՂԵՑԻ

Տեղադրություն. Ինչպես համայնապատկերի անբաժան մասնիկ Սբ. Նշան եկեղեցին գտնվում է քաղաքի սրտում՝ առավել հին թաղամասերից մեկի՝ Կալոյի (վրաց. Կալուբանի) կամ պարզապես Սուրբ Նշան կոչված թաղի կենտրոնում՝ Հերակլի հրապարակի հարևանությամբ՝ մախկին Ոսկերիչների (Մերեթթյանի) և Սուրբ Նշան (հետագայում՝ Հ. Հակոբյան, այժմ՝ Սուլտնիշանի) փողոցների միջակայքում: Ծովի մակերևույթից բարձր է 415 մ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 41°41' 39.62", E 44°48' 17.37":

Ըստ 1831 թ. քաղաքի վարչատարածքային բաժանման՝ Սբ. Նշան Սբ. Նիկողայոս Հրաշագործի եկեղեցին գտնվում էր Սփոյի առաջին մասի առաջին թաղամասում¹:

Պատմություն. եկեղեցու հիմնադրման ստույգ ժամանակն անորոշ է²: Խնդրո վերաբերմամբ գիտական շրջանակները ցարդ հիմնվել են եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորին առկա շինարարական հայտնի արձանագրության հաղորդած տվյալների վրա, համաձայն որի՝ եկեղեցին կառուցվել է 1703-1720 թթ. ընթացքում³, որին 1780 թ. հավելվել է գմբեթը:

Սակայն դեռևս 1837 թ. վրացագրի հետազոտող Պ. Իոսելիանին հայտնել է այն կարծիքը, թե իբր 1703 թ. հայերը եկե-



Սբ. Նշան եկեղեցու տեղը հին քաղաքի հատակագծի վրա (Պ. Դեմետրիուզ, 1887 թ.)

ղեցին հիմնել էին նրանից առաջ գոյություն ունեցած վրաց ուղղափառ եկեղեցու տեղում⁴: Որևէ սկզբնաղբյուրով չփաստարկված Իոսելիանու ինքնահնար այս հայտարարության վրա, ինչպես ստորև կտեսնենք, հետագայում կուրորեն հենվել են բազմաթիվ հետազոտողներ: Ավելին՝ նրանցից ոմանք Իոսելիանու հայտնած մասնավոր և անհիմն կարծիքը վերաշարադրել են՝ համարելով այն «ավանդաբար» փոխանցված տեղեկություն: Այդպես է վարվել, օրինակ, Գ. Աղանյանը՝ նշելով. «Աւանդաբար ասում են, որ ս. Նշան եկեղեցու տեղը առաջ եղել է վրաց ս. Նիկողայոս սքանչելագործի եկեղեցի, որը հայերը գրաւելով տեղը շինել են համանուն եկեղեցի»⁵: Ուղղափառ եկեղեցուն հաճելի ու մաս շահեկան միտքը տեղ է գտել մույնիսկ պաշտոնական հրատարակություններում. «Այս եկեղեցին՝ նվիրված Նիկողայոս Հրաշագործին, ինչպես և հայկական շատ եկեղեցիներ, Վրաստանում մի ժամանակ եղել է ուղղափառության ձեռքին»⁶:

Դարձյալ ավանդության վկայակոչմամբ իբր հայոց եկեղեցուց առաջ տեղում վրաց եկեղեցու գոյության մասին է նշել մաս Թ. Կվիրկվելիան. «Կառուցվել է 1701 թ.: Ասում են, որ ա-

1 Վրաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՎԱԴ), ֆ. 209, ց. 1, գ. 394, ք. 2: Եկեղեցու տեղադրության անորոշարձել են մաս այլ հետազոտողներ: Օրինակ՝ 1840-ական թթ. Մ. Բրոսեմը նշել է. «Գնալով Մերեթթյանի Ռչարով, որը դուրս է բերում վրացական սեմինարի առջև, ձայն կողմում՝ դեպի կենտրոն, տեսնում ենք հայկական գեղեցիկ Սբ. Նշան եկեղեցին, որը գտնվում է բնակելի տներով շրջապատված մի բակում» (Brosset M., Rappports (V) sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie exécuté (en 1847-1848), livre 2, St-Pb., 1850, p. 18): Տփղիսեցի Միքայել Սուլյանն իր «Թիֆլիս քաղաքը իմ մանկության ժամանակ» հուշագրության մեջ նշել է. «Հայկական փողոցից անցնելով դեպի Սաղատակի բազար սկսվում է Ոսկերիչների փողոցը, որտեղ կառուցած է Սուրբ Նշան եկեղեցին» (ՀԱԴ, ֆ. 428, ց. 2, գ. 104, ք. 19): Թբիլիսի քաղաքի պատմության լավագույն գիտականերից Թ. Կվիրկվելիան էլ նշել է. «Սուրբնիշանի – եկեղեցի Հ. Հակոբյանի անվան փողոցի վրա, նայում է բերդին» (გვირგვინი თ., თბილისის აღმშენებლობის ფრაგმენტები სახელწოდებებში, “საბჭოთა ქველგნება”, 1984, № 4, გვ. 123):

2 Ըստ էության, այս խնդիրը պատշաճ բնութային ցարդ չի էլ ենթարկվել:

3 Շրջանառվել է մաս եկեղեցին 1701 թ. հիմնադրված լինելու վարկածը, որի հիմքը Մ. Բրոսեի սխալաշատ ընթերցումն է:

4 Иоселиани П., Описание древностей города Тифлиса, 1866, с. 258 (բնագրում՝ “Сурб-Нишан, бывшая в руках православных, во имя Св. Николая Чудотворца”): Այլ տեղում Պ. Իոսելիանին նշել է, որ «Սբ. Խաչ (Սբ. Նշան) եկեղեցու հիմնադրման ժամանակն անհայտ է: Հնուց այստեղ պահվում է Անդրեսա առաքյալի գանգի մասը» (բնագրում՝ “Церковь С. Креста (Сурб-Нишан). Время основания ее неизвестно. Здесь сохраняется издревле часть черепа Апостола Андрея”, տե՛ս նույնի՝ Древние памятники Тифлиса, Журнал Министерства внутренних дел. 1844. Часть пятая, СПб., с. 120.

5 Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 332, ց. 1, գ. 102, ք. 8:

6 Проценко Ю., Археологический путеводитель по Тифлису, Тифлис, 1881, с. 59-60 (բնագրում՝ “Сурб-Нишанская на Сурп-нишанской улице, именованная в руках православных во имя св. Николая Чудотворца”). Տե՛ս նաև “Кавказский календарь на 1886 г.”, Тифлис, 1885, с. 152 (բնագրում՝ “Церк. эта, как и многия арм., в Грузии была некогда в руках православнаго, посвященная Николаю Чудотворцу”).



Կալոուբանի (Կալոյի թաղ) թաղամասի (կենտրոնում՝ Սբ. Նշան եկեղեցին) տեսքը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2010 թ.)

ուսջ այստեղ եղել է ուղղափառ եկեղեցի: Քանդվելուց հետո վերականգնել են հայ գրիգորյանները: Անվանումը նշանակում է սուրբ Խաչ»⁷:

Կառչելով ինքնահնար «ավանդությունից»՝ նորագույն շրջանի մեկ այլ հետազոտող էլ եկեղեցու նախնական շենքի վրացականությունը հիմնավորելու նպատակով վկայակոչել է Սբ. Նիկողայոս անվան առկայությունը. «Պետք է մտածել և ոչ առանց հիմքի, որ ըստ հին վրացական ավանդույթի Սբ. Նիկողայոսի անունը պահպանվել է ի սկզբանե վրացական, սակայն հայկական Սբ. Նշանի վերափոխված եկեղեցում»⁸:

Վերը շարադրվածից հետևում է, որ գոյություն չունի գոնե մեկ այնպիսի փաստ, որը թեկուզ հարևանցիորեն վկայի 1703 թ.-ից առաջ տեղում գոյություն ունեցած եկեղեցու վրացապատկանության մասին, և, ըստ էության, խնդրին հետամուտ մասնագետները պարզապես չեն տիրապետել եկեղեցու նախնական կառույցի գոյությունը հաստատող որևէ գրավոր տեղեկության: Բացառություն է կազմում դր.-պրոֆ. Պ. Մուրադյանի առաջ բերած 1624 թ. Խորհրդատետրը, որը, հակառակ իր պարունակած կարևոր տեղեկության, թերևս հենց միայն միակը լինելու պատճառով գիտնականին վստահություն չի ներշնչել մատնանշելու ներկայիս եկեղեցու տեղում ավելի հին և, որ ուշագրավ է, դարձյալ հայկական եկեղեցու գոյությունը⁹:

Քննելով խնդիրը՝ նախ հարկ ենք համարում նշել, որ Պ. Իոսելիանին ճիշտ է, երբ վկայում է ներկա կառույցի տեղում ավելի հին եկեղեցու գոյության մասին, միայն թե, ինչպես փաստում են սկզբնաղբյուրները, տեղում եղած հին եկեղեցին նույնպես եղել

7 յՅՕԵՅՅԵԼՕՁ Օ., նույն տեղում: Տե՛ս նաև **Квирквелия Т.**, Старотбилиские названия, “Вечерний Тбилиси”, 6.11.1991 (բնագրում՝ “По преданию, на этом месте в старину стояла православная церковь. После того, как она была разорена и разрушена, новая возведена армянской общиной”):

8 **Арвеладзе Б.**, “Армянские” или грузинские церкви в Грузии ?!, Тбилиси, 1996, с. 14-15 (բնագրում՝ “Нужно думать, и небезосновательно, что, по древней грузинской традиции, имя святого Николоза сохранилось в названии исконно грузинской, но обращенной в армянскую церкви – Сурб-Нишан...”). Տողերի հեղինակը թերևս առաջնորդվել է անհիմն այն կարծիքով, թե «...այդ սրբի պաշտամունքը Հայաստանում ընդունված չի եղել» (**Ուլուբաբյան Բ., Հասրաբյան Մ.**, Դադիվանք, «Հայկազյան Հայագիտական Հանդես», հ. Ը, Պէյրուք, 1980, էջ 37-38): Իրականում Սբ. Նիկողայոսի պաշտամունքը լայնորեն տարածված է եղել նաև Հայաստանում, որի ամենատարբեր գավառներում նշյալ սրբի անվամբ օձվել են բազմաթիվ եկեղեցիներ (Ալն գավառի Կամարակապ և Նարվեր գյուղերի եկեղեցիները, Երզնկա գավառի Բթաշիճ գյուղի մերձակա վանքը, Տիվրիկ գավառի Ջիմարա գյուղի եկեղեցին և այլն: Նա պատկերված է նաև Արցախի Շար գավառի Դադիվանքի որմնակարների տեսարաններից մեկում):

9 **Мурадян П.**, Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988, с. 73.

է հայկական, այլ ոչ վրացական, ընդ որում, ուշագրավն այն է, որ հնի տեղում նոր եկեղեցի կառուցելիս անվանափոխություն տեղի չի ունեցել: Այլ խոսքով՝ նոր եկեղեցուն է փոխանցվել հին եկեղեցու Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի անվանումը:

Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք 1703 թ.-ից ավելի վաղ թվագրվող գրավոր և վիճակագրական, մեծագույն մասով առաջին անգամ շրջանառվող այն բոլոր վկայությունները, որոնք աներկբա փաստում են տեղում առնվազն ԺԷ դարի սկզբներից ի վեր հայկական նույնանուն հին եկեղեցու գոյության մասին:

Առաջինը հենց այն Խորհրդատետրն է, որը նվիրաբերվել է Տփլիսի Սբ. Նիկողայոս եկեղեցուն. «Գրեցաւ ի թուին Ռ-ՀԳ (1624), ետու գիրս զայս ես՝ Անդրի Կեսարացի քահանայ եկեղեցոյն Ս. Նիկողայոսի, ի քաղաքն Տփլիսի...»¹⁰:

Հիշատակարանից պարզվում է, որ կեսարացի Անդրի քահանան 1624 թ. ձեռագիրը փոխանցել է (կարելի է հասկանալ՝ նվիրել է) Տփլիսի Սբ. Նիկողայոս եկեղեցուն, ուստի հետևում է, որ այդ թվականին քաղաքում գոյություն ունեցած հայոց եկեղեցիներից մեկը կրում էր Սբ. Նիկողայոսի անունը¹¹:

Երկրորդ վկայությունը 1656 թ.-ից է և վերաբերում է նշյալ թվականին գրիչ Աղամալ Ջուղայեցու ձեռքով Տփլիսի Մուդնու Սբ. Գևորգ եկեղեցում ստեղծված և Սբ. Նշանին նվիրաբերված Գանձարանին, որի հիշատակարանը մեզ է ավանդել եկեղեցու՝ Սբ. Նշան անվան վաղագույն վկայությունը. «Արդ՝ ես բազմամեղ Ջուրաբս ստացայ գսբ. տառս և ետու յիշատակ ի դումն Ս. Նշանին, ի ձեռն տէր Ռհան քահանային, յիշեցեք...»¹²:

Հաջորդ կարևոր վկայությունները 1662 թ.-ից մեզ հասած արձանագրության մասերն են և նույն թվականին կերտված արձանագիր խաչքարը, որոնք բոլորն էլ պահված են եղել եկեղեցու՝ Սբ. Գևորգի անվամբ օծված հարավային խորանի (ավանդատան) մեջ և առաջին անգամ են ներկայացվում¹³: Նորահայտ այս վիճագրերի շնորհիվ ոչ միայն պարզվում է եկեղեցու հերթական վերաշինության տարեթիվը՝ 1662 թ., այ-

լև այն իրականացրած ճարտարապետի՝ Նավասարդի անունը, ով, ամենայն հավանականությամբ, այն նույն անձն է, որը 1655 թ. Բուլնիս-Խաչեն գյուղում կառուցել է Սբ. Կիրակի եկեղեցին, իսկ 1663 թ.՝ Շղվերի (Մեծ Շուլավեր) մոտ գտնվող Բնի Չորի Մեծ վանքի գլխավոր եկեղեցին¹⁴:



10 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1978, էջ 155:

11 Թեև գտնում ենք, որ հիշատակարանը բավականաչափ հստակ է մատնանշել եկեղեցու գտնված վայրը, սակայն հավելյալ նշենք, որ Կեսարիան Սբ. Նիկողայոս անվամբ եկեղեցի չի էլ ունեցել (քաղաքում էին գտնվում Սբ. Գրիգոր, Սբ. Սարգիս, Սբ. Աստվածածին, Վարի թաղի Սբ. Հակոբ եկեղեցիները, իսկ մերձակայքում՝ Սբ. Կարապետի վանքը: Տե՛ս **Էսկիլուայ**, Կեսարիայի հայութիւնը, «Արեւ», 1923, Թ տարի, № 231, 13 սեպտեմբեր, էջ 1: **Արզուման մառու**, Թրքակցութիւններ, «Կոհակ», 1913, № 5, էջ 56):

12 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ (այսուհետև՝ ԺԷԳ, համապատասխան էջերով), Երևան, 1984, էջ 721:

13 Արձանագրություններին առաջին անգամ ծանոթացել ենք 2011 թ. Ն. Ակոպովի տրամադրած լուսանկարների միջոցով, իսկ 2012 թ. ապրիլին հնարավորություն ունեցանք վիճագրերն ուսումնասիրել տեղում:

14 **Աղամյան Ս., Կարապետյան Ս.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 63:

Հին եկեղեցուն պատկանած շինարարական արձանագրությունը, ամենայն հավանականությամբ, պահպանության նպատակով նոր եկեղեցու հարավային ավանդատուն է փոխադրվել տեղում նոր եկեղեցին կառուցելուց հետո:

Երկու քարի վրա (չափերը՝ 38,3 x 12,3 և 69,3 x 37 սմ) քառատող փորագրված արձանագրության բովանդակությունը հետևյալն է.

Ի քվ(ին) Ռ-ճԺԱ (1662) || ...հ(ար)սըն, Գասպար. իրան ա(ներ)հ(այր) Բերոն, քարայհատ Նաւայսա|րթն, որ է Յա-ռիճ(ցի)¹⁵, շին(եցաւ) ձեռամբ ս(ո)ց(ա):

Հրատ. առաջին անգամ:

Նույն ավանդատան մեջ պահվող վերոնշյալ արձանագիր խաչքարը բաժանված է առնվազն չորս մասի, որոնց վրա ընթերցվում է.

[Սուրբ խաչս խօջա Բա]րխ(ու)տարին եւ իր ամո(ւ)սին Գարայջանին: Ս(ուր)ք խ(ա)չս քա(րե)խ(աւս), քվ(ին) Ռ-ճԺԱ (1662):

Հրատ. առաջին անգամ:

Վերջապես 1673 թ., ի թիվս քաղաքի հայկական 8 եկեղեցիների, Սբ. Նշանը հիշատակում է նաև ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Շարդենը¹⁶:



ԺԷ դարից պահպանված սկզբնաղբյուրային ահա այս մի խումբ հիշատակությունները հաստատում են այն իրողությունը, որ, այո՛, նախքան ցարդ կանգուն եկեղեցու կառուցումը և առնվազն շուրջ մեկ դար առաջ տեղում եղել է ավելի հին նույնանուն հայկական եկեղեցի, որը, ի դեպ, վերջին անգամ հիմնավորապես վերաշինվել է 1662 թ. հայտնի քարահատ-ճարտարապետ Նավասարդի ձեռքով:


15 Արդյո՞ք քարահատ-ճարտարապետ Նավասարդը սերում էր Շիրակի Հառիճ գյուղից, թե՞ մեզ անհայտ հասանուն մեկ այլ գյուղից, դժվար է որոշել:
16 Chardin Jean, Journal du chevalier Chardin en Perse et aux Indes orientales par la mer Noire et par la Colchide, Londres, 1686, 1^{ere} p., pp. 221-222.

Ինչ վերաբերում է ԺԸ դարի ընթացքում եկեղեցու բազմափուլ վերաշինությանն ու համալրմանը, ապա այդ մասին պատմող վկայություններն էլ առավել բովանդակ և մեծաթիվ են:

Սրանց շարքում, անշուշտ, առաջնային է եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորին ցարդ պահպանված 1703 թ. եկեղեցին հիմնադրելու և 17 տարվա ընթացքում կառուցելու մասին պատմող շինարարական արձանագրությունը, որը 13 տողով փորագրված է միմյանց կից երկու քարերի վրա.

Յ(խու)ս Զ(րիստո)ս | շն(ո)րհօք ս(ուր)ք հոզ(ո)յն եղև հիմնարկ(ու)մն և շին(ու)մն ս(ուր)ք Նշանի | եկեղ(ե)ցոյս քվ(ին) Ռ-ճԾԲ (1703), ի ք(ա)զ/ատրութե(ան) Լէվան խ(ա)նին և իւր որդր/ցն, ի հ(ա)յր(ա)պետո(ւ)թե(ան) տ(եա)ռն Ն(ա)հ(ա)պետին. | ես մէլիք Կիօրկիս որդի տանուտէր Ասլամազի շինեցի | գտ(ա)ճ(ա)րս գալս, որ յանուն ս(ուր)ք Նիկող(ա)յոսի յ(ի)շ(ա)տակ ինձ և ծն(ո)ղ(ա)ցս և եղբարցս իմոց և կող(ա)կցոյս Խանկէր/վանին և որդ(ո)ցս Զուրապին և Պապին և դստերցս և բազ/մաշխատ ք(ա)հ(ա)նայս իմոյ տ(ե)ր Մովսէսին և ես մէլիք Կիօրգիս | վճ(ա)րեցի ըզկին սմայ ամ(ե)նայ)ն ամէ Ռ-ճԿԹ (1720)-ին. մնաց կ(ա)թողիկ|էն յ(ի)շ(ա)տ(ա)կ անջնջելի ավարտողաց:

Հրատ. Brosset M., Rapports (V) sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie exécuté (en 1847-1848) par M. Brosset, livre 2, St-Pb.,





Սբ. Նշան եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի՝ 1720, 1780 և 1781 թթ. շինարարական արձանագրությունները

1850, ք. 19. **Ջալալխանց Ս.**, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիփսիս, 1858, էջ 71: **Мурадян П.**, նշվ. աշխ., էջ 69:

Ծանոթ. վիճաբի վերծանության առաջին փորձը հեղինակել է Մ. Բրոսեն, որը, սակայն, թե՛ սխալաշատ է և թե՛ տեղ-տեղ թերի: Հաջորդ, ավելի ամբողջական վերծանությունը հեղինակել է Ս. Ջալալխանցը: Ի վերջո, միանգամայն անթերի է պրոֆ. Պ. Մուրադյանի վերծանությունը:

1703-1720 թվականների ընթացքում իրականացված վերաշինության աշխատանքների մասին մի նոր էջ է բացում նաև նորերս եկեղեցու հարավային ավանդատան մեջ հայտնաբերված արձանագրությունը, որը պատմում է զանգակատան՝ Բարխուդարի դուստր Յազանի նախաձեռնությամբ 1719 թ. վերաշինության մասին: 50 x 48 սմ չափի սալակտորին հնգատող արձանագրված է.



Կամաւն ա(ստուծոյ) եւ Բարխուդարի դուստր Յազանի վերստին նորոգեցի ի իորս շինած զանգակատունս, թվ(ի)ն ՌՃԿԸ (1719)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Եկեղեցու շինարարական աշխատանքներն ամբողջանում են միայն 1780-ական թվականներին (1780 թ. կառուցվում է գմբեթը, իսկ 1781 թ.՝ հյուսիսային մուտքը): Այս իրադարձությունների մասին վկայող արձանագրությունները նույնպես տեղ են գտել հյուսիսային մուտքի բարավորին. առաջինը՝ յոթ տողով մարմարե սալիկին, իսկ երկրորդը՝ մեկ տողով նախորդից աջ և ձախ.

Շնորհիւ տ(եառ)ն ա(ստուծոյ) շինեցաւ կաթողիկէն | եկեղեցոյս ի ժամանակս բագատորութե(ա)ն վրաց Հերակլեա եւ հայրապետութե(ա)ն տ(եառ)ն Միմէօսի ամ(ենայն) հայոց կաթողիկոսին, արդեամբ Ղազարի, որդենօքն, | յիշատակ համայն կենդանեաց եւ | ննջելոցն իւր, ի թուին ՌՄԻԹ (1780).



Հրատ. Brosset M., նույն տեղում: Ջալալեանց Ս., նույն տեղում: Мурадян П., նշվ. աշխ., էջ 70:

Յիշատակ է դռունս մ(ա)հտ(ես)ի տ(է)ր Նիկողայոսին, ՌՄԼ (1781):

Հրատ. Brosset M., նույն տեղում: Ջալալեանց Ս., նույն տեղում: Мурадян П., նույն տեղում:


Ծանոթ. Պ. Մուրադյանի մոտ սխալմամբ՝ «Նիկողայուն»:


Թերևս եկեղեցու գմբեթի կառուցմանը ժամանակակից է թմբուկի արևմտահայաց նիստի վերնամասում (լուսամուտից վեր) ագուցված սուրբ Նիկողայոսի պատկերաքանդակը, որն ունի մեկ տողով փորագրված վրացերեն արձանագրություն.

Մծօնեճ Եօյլօլօի
Թարգ. սուրբ Նիկողայոս:



Հավանաբար ԺԸ դարասկզբին հիմնահատակ քանդված հին եկեղեցուն է պատկանել նաև երկու մասի կիսված և բավականաչափ քայքայված մի բարավոր, որը նույնպես պահված է եղել եկեղեցու հարավակողմյան ավանդատան մեջ: Երկու տողով ընթերցվում է.





Աբ. Նշան եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի՝ 1720, 1780 և 1781 թթ. շինարարական արձանագրությունների գրչանկարները

Յ(հսու)ս Զ(րիստո)ս / տ(է)ր ա(ստուա)ծ:
Հրատ. առաջին անգամ:

ԺԸ դարում ծավալված շինարարական աշխատանքների ընթացքն արձանագրված է եղել նաև «Էջմիածնայ տետրակ»-ում (քոթոկում), որտեղից ժամանակին ընդօրինակվել է հետևյալը. «Շինեալ ի տանուտեր Ամիրէ և յորդոյ նորա տանուտեր Ասլամազայ, իսկ զկնի 1703 նորոգեալ ի մէլիք Գիօրկոյն և զկաթողիկէն յետոյ շինեալ ի Մէիրապ աղայն Շարիպէկեան 1784:

Տանուտեր Ամիր և որդի տանուտեր Ասլամազն շինեցին ս. Նշանիս ս. Նիկողայոսի եկեղեցին իւր ժամատնով և շրջապատով: Խօջա Պարխուտարը և կողակից Դարեճանը շինեցին ս. Նշանի զանգակատունը իւր խցովը:

Պարխուտարի դուստր Եագունդը, իւր հօր շինած զանգակատունը քանդվել էր, կրկին նորոգեց իւր խաչով:

Տանուտեր Գիօրգին եկեղեցու պարիսպը յետ քաշեց:

Տան(ուտեր) Ասլամազը և կողակից Շահրուբանը վերստին նորոգեցին եկեղեցին:

Փերիխանը խաչկալը շինեց:

Մէլիք Գիօրգին վերստին շինեց և նորոգեց ս. Նշանը հիմքից, մեծացրեց կամարածև և գեղեցիկ յօրինուածով ՌճԾԲ (1703) թուին, ՌճԳ (1741)-ին օրհնեցին և պատարագ մատուցին, և այդ տարի մեռաւ մէլիք Գիօրգին:

Մէլիք Գիօրգին և կողակից Խամփերվանը մի աշուղխանայ շինեցին եկեղեցոյս յիշատակ:

Ուստայ բանահ Յակոբը, իւր աշակերտ Սարգիսը նուիրեց եկեղեցու շինութեան ժամանակ, որ ծառայութիւն անէ, տարին մի լիտր ձէթ, մի չարէք մոմ:

Խօզոյենց Առաքելն ու կողակիցը եկեղեցոյս մէկ խցի տեղ և գերեզմանատուն առան:

Ալահդուլունց Մուրատի որդին Մարտիրոսն և Փանոսը ժամատան մեծ դուռը շինեցին:

Անդրյեան Գզիլեանց Գարեշան և որդիք Գիօրգին և Յարութիւնը մէկ դուրան տուին լուսագին:

Գասպարի որդի Մովսէսը, Յոհանը և Յովսէփը իրեանց ան-
յիշատակ մեռած բուերորդի Սկրտումի յիշատակին, տունը
գրաւ էր մնացել, թափեցին, Սկրտումին եկեղեցում թաղեցին,
տունը տուին եկեղեցուն, որ իրանց էլ գերեզմանատուն լինի:

Թէմուրազ արքան տեսնելով առաջին թագաւորաց
գրեանքը, իրեանք ևս նորոգեցին և դաղավաթամայ գիր
տուին, որ եթէ անյիշատակ մարդ մեռնի, որդի և աղջիկ չմնայ,
ինչպէս որ քաղաքացիք կամենան այնպէս անեն, ոչ ինքը ոչ
իւր իշխանները իշխելու հրաման չունենան:

Գիւան Օթարը իւր կողակից Խամփերջանը, որ Էյնալ մե-
լիքի տղայ Ռոստոմից մէկ դուրան գնեց՝ տուեց Վանքին, ս.
Նշանին, Ջգրաշէնին, Նորաշէնին, Մօղնին, Բետղեհէմին,
Քամոյենց եկեղեցուն, դուրանի քրեհից ութ մոմապատ մէկ-
մէկ ամսէնը մէկ անգամ, որ միշտ յայսմաւորք կարդան:

Մահտեսի մեծ տէր Նիկողայոսը եկեղեցու դուռը փոխեց
նոր տաշած քարով:

Մէիրապ աղայի որդի Ենովք աղան շինեց հրաշալի կա-
թողիկէն, կանաչագոյն փայլուն և պայծառ շինարին, հոյա-
կապ և բարձրաբերձ գմբէթով, որ 50 տարուց առաջ եկեղեցին
շինուած, բայց չէր լրացած, գլուխը ոսկեգօծ խաչով, գմբէթի
տակ բոլորակի վերնատուն, սորա շուրջը 12 առաքեալների և
4 աւետարանիչների պատկերներով զարդարեց, առանց
ծախս խնայելու և բեմի երկարութեամբ տնօրինական 7
պատկեր շարեց քանդակուած քարերով»¹⁷:

Ինչպէս տեսնում ենք, «Էջմիածնայ տետրակ»-ում արձա-
նագրված մի շարք վկայություններ ուղղակիորեն արտացոլ-
ված են վերը ներկայացված հայտնի և նորահայտ արձանա-
գրություններում, ուստի տրամաբանական է, որ նա, ով ժա-
մանակին գրանցումներ է կատարել «Տետրակ»-ում, ծանոթ է
եղել և օգտվել է նաև այն արձանագրություններից, որոնք, եր-
կար ժամանակ պահված լինելով եկեղեցու հարավային ա-
վանդատան մեջ, անտեսվել էին¹⁸:

17 ՀԱԳ, ֆ. 332, ց. 1, գ. 102, ք. 8:

18 Հարկ է նկատել, որ ինչպէս նորահայտ արձանագրություններին, այնպէս էլ
«Էջմիածնայ տետրակ»-ին անհաղորդ են եղել քե՛ր Բզմատ Բոսեյիանին,
քանի որ նա ընդամենը նշել է. «Այս եկեղեցին կառուցված է քաղաքացի (նո-
քալաք) Ամիր Մամասախլիսի ծախքով, որի տոհմից այժմ կենդանի է Ջու-
րաք Մելիքովը» (Մելիքոս-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հա-
յերի մասին, հ. 3, Երևան, 1955, էջ 267) և քե՛ր վիմագրական ժառանգությանն
առաջինն անդրադարձած Մ. Բրոսեն: Ի դեպ, եկեղեցու կառուցման մասին
հպանցիկ անդրադարձ ունի նաև Ա. Երիցյանը. «Մունթյեան, Բաստա-
մեան և Բաշինջաղեան քաղաքացիք շինել են Մօղնին, Ալամագեաննե-
րը-Ս. Նշանը...» («Արձագանք», 1882, № 11, 2 մայիսի, էջ 169):

Այսպիսով՝ Սբ. Նշան եկեղեցին ԺԹ դար է մուտք գործում
ճարտարապետական առումով ամբողջացած տեսքով:
Դրանից հետո էլ այն գտնվում էր ծխականների մշտաբնակ
ուշադրության ներքո, որի արդյունքում այնտեղ մշտապես
կատարվում են շինարարական աշխատանքներ: Դրանցից
հայտնի են 1830 թ. եկեղեցու ներքին ծավալների նկարագր-
դումը երեցվոխ Ավետիք Փիրոյանի նախաձեռնությամբ¹⁹,
շինության ընդհանուր բարեկարգումը (1837 թ.), մատուռի կա-
ռուցումը (1861 թ.), ինչպէս նաև մասնակի այլ նորոգու-
թյուններ (1868 թ.):

1833 թ. սրբատաշ քարով բարեփոխվում է եկեղեցու հա-
րավային ճակատից բացված մուտքը, որի մասին երկկեզվյան
(հայերեն և վրացերեն) արձանագրություն է փորագրվում
նույն մուտքի ճակատակալ քարին.

*Շինեցաւ դռոս ս(ուր)ք եկեղեցոյ արդեամբ քազմաշխատ
սասաք ք(ա)հ(ա)ն(ա)յ տ(է)ր Յովհաննէս Չա/ռափեանին ի յի-*



*շատ(ա)կ իւր եւ կենակցոյն, դստերն՝ մէլիք Ջուրաքի եւ որ-
ոցն, 1833:*

*უგადლო, მოიხსენებ დეკანოზი მეგვიდრე გერ-ოპანეზ
ზარაფოვი და მისი მშობლები წველსა ჩეკლვ-სა მარტოს ო.
Հրատ. Мурадян П., նշվ. աշխ., էջ 70:*

Ծանոթ. հրատարակիչը վերձանության մեջ և դրանից ելնելով՝ ուսերեն
թարգմանության մեջ թույլ է տվել իմաստային անճշտություն:

Կայսեր՝ Տիդիս այցելելու կապակցությամբ 1837 թ. մայի-
սի 28-ին Վրաստանի բեմի առաջնորդ Թադեոս արքեպիսկո-
պոսը բարեկարգման որոշ աշխատանքներին ձեռնամուխ լի-
նելու հորդորով գրություն է հղում Սբ. Նշան եկեղեցու երես-
փոխ աղա Ավետիս Փիրոյանցին. «...յառաջ քան զվեհափառ
գալուստ թագաւոր կայսերն հարկաւոր է ածել ի վայելուչ
ձևակերպ զամենայն եկեղեցական շինուածս, զկրպակս,
զտունս, զպարիսպս և ծեփել և ներկել զնոսին յարմարաւոր
իմն գունով, որոց աղագաւ ի 27 ամսոյս ընկալայ թղթագրու-
թիւն... վասն որոյ սովաւ պատուիրեմ Ձերունդ գերյարգու-
թեան, ի 29 ամսոյս ձեռնամուխ լինել ի նորոգութիւն և ի գեղա-
գարդութիւն ամենայն եկեղեցական պատկանելեաց ըստ
հետևեալս կերպիւ եկեղեցին ներքուստ ծեփել և ներկել մար-

19 ՎԱԳ, ֆ. 500, ց. 8, գ. 74, ք. 5:

մարանման դեղով կամ այլ յարմարաւոր գունով, իսկ արտաքուստ բռել (բաղաբաշ) և ներկել դեղին կամ սպիտակ գունով, զնորաշէն մատուռն եղեալ յառաջոյ աւագ դռան եկեղեցւոյն ծեփել և ներկել և որքան կարելին է վաղվաղակի բառնալ գտախտակակապն (խարաչօ) և զպարիսպ եկեղեցւոյն ներքուստ և արտաքուստ ծեփել և ներկել դեղին կամ սպիտակ գունով և ամենայն մասամբք և շինուածովք զարդարել զեկեղեցին և զեկեղեցական պատկանելիսն ի գեղեցկութիւն քաղաքիս: Յայսմ մասին կարգենք Ձեզ յօգնականութիւն և ի գործակցութիւն զտէր Յովհաննէս աւագ քահանայն Ջառափեան և զտէր Անդրէասն Տէր-Ստեփանեան, որոց և պատուիրեցաւ արիութեամբ վարել յամենայնի յօգուտ եկեղեցւոյ»²⁰:

1861 թ. Տիֆլիսի քաղաքացի Վարվառե Ռոտինյանցը եկեղեցուն կից ամփոփված հանգուցյալ ամուսնու՝ Գարբիէ Ամիրադյանցի հիշատակին կառուցում է մի տապանատուն (խոսքը, ամենայն հավանականությամբ, հյուսիսային նախամուտքի նման տապանատան վերածված հարավային նախամուտքի մասին է), որի առթիվ հարավային մուտքի կողմնատում ազուցված սալիկին արձանագրվում է.

Կանգնեաց զայս մատուռ / Թիֆլիզոյ քաղաքացւոյնի Վառվառե յագգէ / Բօտինեանց՝ ի հիշատակ / ամուսնոյ իւրոյ Գարբիէի / Գէորգեան Ամիրադեանց աստ հանգուցելոյ, թուին 1861, նոյեմբ. 1:

Հրատ. Мурадян П., նշվ. աշխ., էջ 70-71:



Նորոգումներ են կատարվում նաև 1868 թ.: Ընդամենը 1020 ռուբ. ծախս պահանջող աշխատանքները ներառում են խաչկալի նորոգումը (300 ռ.), ներքին ծավալների սպիտակեցումը (500 ռ.) և այլն²¹:

1886 թ. Սբ. Նշանը հիշվում է ի թիվս քաղաքի 24 հայկական եկեղեցիների, որի ծխականների թիվն էր 1925 շունչ²²:

1891 թ. Հայուհյաց բարեգործական ընկերությունը Սբ. Նշան եկեղեցու նորոգությանը հատկացնում է 543 ռ. 10 կ.²³:

20 Մատենադարան, ֆ. 49, թղթ. 148, վավ. 179:

21 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 5061, թ. 1:

22 “Министерство внутренних дел. Департамент духовных дел иностранных исповеданий. Алфавитные списки армяно-григорианских церквей и магометанских мечетей в империи”, С.Петербург, 1886, с. 60-61.

23 «Արձագանք», 1891, № 7, 28 ապրիլի, էջ 102:

Հերթական նորոգությունների անհրաժեշտությունը զգացվում է արդեն 1894 թ. «Քաղաքի կենդրոնի եկեղեցիներից ս. Նշանն արդեն իսկ մի պատկառելի հմութիւն է, եթէ շուտով նորոգութիւն չը կատարուի, վտանգի կենթարկուի»²⁴:

Սբ. Նշան եկեղեցին կնքվում, փակվում է 1928 թ., բայց 1930 թ. մարտին վերադարձվում է համայնքին²⁵:

1931 թ. մայիսի 3-ին թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոսը Վրաստանի Հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեին հղված բողոքագրում նշում է. «Թեմական խորհուրդը մի քանի անգամ դիմել է ուր հարկն է Խոջիվանքի եկեղեցին վերադարձնելու և սուրբ Նշան եկեղեցին բանալու միջնորդութեամբ, բայց բազմակի միջնորդութիւնների վերաբերեալ մինչև օրս ոչ մի կարգադրութիւն չի եղել»²⁶:

Խորհրդային տարիներին եկեղեցու շենքը հարմարեցվում և ծառայեցվում է տարբեր նպատակների. «Համաշխարհային պատերազմի տարիներին եկեղեցին դարձրին մակարոնի և վերմիշելի պահեստ: Ավելի ուշ այն վերածվեց Ազգային գրադարանի գրապահոցի (հիմնականում այստեղ պահվում էր հայ պարբերական մամուլ)»²⁷:

Հակառակ այն փաստին, որ մշտապես շահագործվող եկեղեցու շենքը ենթակա էր շարունակական քայքայման և կարիք ուներ որոշակի նորոգությունների, խորհրդային տասնամյակներին այդպիսիք երբևէ այդպես էլ տեղի չունեցան: Մինչդեռ հյուսիսային պատին փակցված ցուցանակն ազդարարում էր և այսօր էլ դեռևս ազդարարում է, որ «Հուշարձանը պահպանվում է պետության կողմից, փչացնողները պատժվում են օրենքով»:

Վրաստանի անկախացումից հետո տարեցտարի ոչ միայն խորանում է շինության շարունակական քայքայումը, այլև այն դարձրում է դիտարկվել որպես պատմական հուշարձան, քանի որ օրավուր ուղղակի եկեղեցու պատերին կից մեկը մյուսի հետևից սկսում են ծնունդ առնել ակնհայտորեն անօրինական, սակայն իշխանությունների կողմից արտոնված բնակելի շինություններ:




24 «Արձագանք», 1894, № 65, էջ 1:


25 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Երևան, 1997, էջ 526:

26 Նշվ. աշխ., էջ 516:


27 Գեղև. Անեանում է Թիֆլիսի պատմությունը..., «Լրագիր օր», 1996, 18 հունվարի, էջ 6:



Աբ. Նշան եկեղեցու գմբեթը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ա. Գաբրիելյանի, 1990 թ.) և 1780 թ. գմբեթին տեղադրված խաչը (լուս.՝ Ա. Բակոբյանի, 2012 թ.)



Սբ. Նշան եկեղեցու շուրջ ծավալված ապօրինի շինությունները 1990-ական թթ. կեսերին (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1994 և 1996 թթ.), եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից և արևելքից (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1970-ական թթ.)



Աբ. Նշան եկեղեցին 2002 թ. հոկտեմբերի 20-ի հրդեհից մեկ օր անց (լուս.՝ Ս. Դարչինյանի) և ներքին տեսքը 2007 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

1998 թ. սեպտեմբերին Վրաստանի հուշարձանների պահպանության՝ եկեղեցու ճակատագրով իբրև թե մտահոգ մի քանի աշխատակիցներ մերձաբնակ հայերին հայտարարում են, որ, եթե նրանք մեկ ամսվա ընթացքում նորոգության աշխատանքներին ձեռնամուխ չլինեն, եկեղեցին կփոխանցվի վրաց պատրիարքարանին²⁸:

Այս դրվագն ուղղակիորեն և վերջնականապես փաստում է, որ Վրաստանի պատկան մարմինները եկեղեցին այլևս չէին դիտարկում որպես պահպանության ենթակա պատմական հուշարձան:

Եվս 4 տարի անց՝ 2002 թ. հոկտեմբերի 20-ի գիշերը, մի դեպքում «անհայտ»²⁹, մյուսում «մի թափառաշրջիկ ռուսի անզգուշության»³⁰ պատճառով եկեղեցու ներսում հրդեհ է բռնկվում, որը 9 հրշեջ մեքենաներ հազիվ են կարողանում հանգցնել...³¹:


Հրդեհի հետևանքով գրեթե լրիվ քայքայվում-թափվում են եկեղեցու ներքին մակերեսներն ամբողջությամբ պատած սվաղի շերտերը, որոնք մեծ մասամբ որմնանկարագարդ էին: Կորուստն ավելի է ահագնանում հատկապես այն պատճառով, որ մինչ 2002 թ. հրդեհը եկեղեցին տարբեր նպատակներ

28 “Голос Армении”, 1998, 26.09, № 108, с. 1:

29 **BS-PRESS**, “Пожар тушили девять машин”, “Вечерний Тбилиси”, 2002, 22-23 октября, № 121. Ի դեպ, հաղորդագրության մեջ չի մտնուցվել, որ շուրջ 300 տարի առաջ կառուցված եկեղեցին մինչև ԺԹ դարի կեսերը իբր պատկանել է վրաց ուղղափառ եկեղեցուն, որից հետո միայն տիրել են հայերը (բնագրում՝ “Здание церкви построено 300 лет назад, до середины XIX века оно принадлежало грузинской православной церкви, потом перешло к армянской церкви”): Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են...

30 “სახვად-დასავადი”, 28.10-3.11, 2002, № 44:

31 “Вечерний Тбилиси”, 2002, 22-23 октября, № 121.



2002 թ. հրդեհի հետևանքով շարքից դուրս եկած կղմինդրածածկը հետագա տարիներին ավելի խոցելի դարձավ բուսականության ավերիչ մերգործության պատճառով (լուս.՝ Ն. Ակոպովի, 2011 թ. և Ս. Կարապետյանի, 2007 թ.)

րով շահագործվելու պատճառով մշտապես փակ էր և, ըստ այդմ, անմատչելի այցելուների համար: Փաստորեն երբևէ առանց նույնիսկ հպանցիկ ուսումնասիրության կամ գոնե մասնագետների կողմից լուսանկարվելու անվերադարձ ոչնչանում են տփղիսյան հայ որմնանկարչական դպրոցի՝ ԺԸ-ԺԹ դարերի եզակի նմուշները (որմնանկարագրողման վերջին աշխատանքներն իրականացվել էին 1830 թ.): Այդ արժեքների մասին սույլ մոտավոր պատկերացում թերևս կարող ենք կազմել 1970-ական թթ. կատարված սիրողական մի քանի լուսանկարների միջոցով:

Հրդեհից հետո անհամեմատ մեծանում է եկեղեցու վթարային գործոնը: Ջրի քայքայիչ ազդեցությունից նստվածքներ

են առաջանում աղոթասրահի կենտրոնական հատվածում և հյուսիսային նախամուտքի՝ թաղումներ պարունակող տապանաքարածածկ մակերեսին:

Աղբով լցված, շների և թափառականների ապաստանավայրի վերածված եկեղեցին 2007 թ., այնուամենայնիվ, ստանում է պատմական հուշարձանի կարգավիճակ (հետևում է, որ Վրաստանի անկախացումից ի վեր այն իսկապես հանված է եղել Թբիլիսիի պատմական հուշարձանների ցուցակներից)³²:

32 ԵՆՏՈՒՄ Ե., օստրոյուլ ժեցլադ ցնոծոլո ՆձձձՅՈՒ ԵՂԵՍԻՍ ԺԱԼԼԵՅՈՒՍ ԹԱՅՅԵՍԱՓՐԵԸ ՕՔՇԱ, “ՐԵՅՈՆԱՆՏԻ”, 5.02.2010, էջ 5: ՏԵՆ ՄԱՆ “Из церкви убрали псарню”, “Головинский проспект”, 2010, № 7.



Դրվագներ Սբ. Նշան եկեղեցու որմնանկարներից (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1976 թ.)



2002 թ. հրդեհից հետո պահպանված որմնանկարների մնացորդներ, որոնք ավելի ուշ զոհ գնացին 2012 թ. հունվարյան հրդեհներին (տես.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)



2012 թ. հունվարյան հրդեհները ջրով մարելու հետևանքով գոյացած նստվածքները նկեղեցու աղոթարահի կենտրոնական հատվածում և հյուսիսային մուտքի առջև նախարահի մեջ (լուս.՝ Ն. Ակոպովի, 2012 թ.)

Մթ. Նշանի համար, սակայն, կանխորոշված էին նոր արհավիրքներ: 2012 թ. հունվարի 3-ին և 7-ին եկեղեցին անհայտ հանգամանքներում ենթարկվում է իրարահաջորդ երկու նոր հրդեհումների: Առաջին հրդեհի նման այս վերջինները նույնպես մարվում են բացառապես ջրով, որի արդյունքում նստվածքներն ավելի ակնառու են դառնում (աղոթարահում առաջանում է մինչև մեկ մետր իջվածք): Բացի այդ՝ ջերմությանից փլուզվում է գմբեթակիր 4 սյուներից հյուսիսարևելակողմյանը, առավել վտանգավոր են դառնում եկեղեցու արևմտյան և արևելյան ճակատներին նստվածքների հետևանքով գոյացած ճաքերը, իսկ հյուսիսային մուտքի առջև կառուցված սյունասրահ-զանգակատուն-տապանատան՝ 2002 թ.-ից ի վեր ակնառու ճաքերը դառնում են ծայրահեղ վտանգավոր:

2012 թ. մարտին Վրաստանի մշակութային ժառանգության ազգային գործակալությունը ձեռնամուխ է լինում եկեղեցու ներսում մոխրակույտի վերածված երբեմնի գրադարանի և համատարած թափված սվաղի շերտի աղբաման զանգվածի հեռացման և ներքին մակերեսի մաքրման աշխատանքներին, որոնք դեռևս շարունակվում էին ապրիլին: Հավանական փլուզումները կանխելու նպատակով պատկան մարմինները եկեղեցու ներսում և հյուսիսային նախամուտքի մեջ տեղադրում են մետաղական և փայտե հենակներ, սակայն մայիսի 13-14-ի հորդ անձրևի հետևանքով առերևույթ ամրակայված քառասյուն նախամուտքն ամբողջությամբ քանդվում է:

Ներկայումս տակավին կանգուն եկեղեցին օրհասական վիճակում է:



2012 թ. հունվարի 3-ի և 7-ի իրարահաջորդ հրդեհները (մարումը դարձյալ իրականացվում է պատմական հուշարձանի համար անբույլատրելի միջոցով՝ ջրով) կործանում են եկեղեցու հյուսիսարևելյան սյունը (լուս.՝ Ն. Ակոպովի, 2012 թ. հունվար)

Ճարտարապետություն. Եկեղեցու ճարտարապետական նկարագրին անդրադարձած առաջին հեղինակներից մեկը Ի. Իոսելյանին է, ով «Տփղիսի և Սոմխիթի հնությունների նկարագրությունը» խորագրի ներքո 1837 թ. Սբ. Նշան եկեղեցու մասին նշել է. «...հոյակապ է, գմբեթավոր, հանուն սուրբ Նիկողայոսի, չորս սյան վրա կառուցված: Մրա գմբեթը կանաչ աղյուսով է ծածկված, իսկ եկեղեցին ու թևերը կղմինդրով: Մրա մեջ կա երեք խորան. միջինը մեծ, հանուն սուրբ Նիկողայոսի, հյուսիսայինը՝ հանուն Անդրեաս առաքյալի, և հարավայինը՝ սուրբ Գեորգի...»³³:

Միքայել Մուլյանն էլ իր հուշերում նշել է. «...ընդարձակ ու լայն եկեղեցի է, որ հին եկեղեցու տպավորություն է անում:

Ասում են, որ սա Հաղպատու Ս. Նշան եկեղեցու մնամութին ունի և նրա անունն է կրում»³⁴:

Շատ ավելի ուշ կառույցի ճարտարապետական համառոտ նկարագրությունը ներկայացրել է ճարտ. դր. Մ. Հասրաթյանը³⁵:

1980-ականների սկզբներին «...վերածվել է գրքերի պահոցի: Եկեղեցին իր բարձր գմբեթով և ահռելի չափերով խիստ տարբերվում է Թիֆլիսի մյուս կառույցներից: Հիշատակել է


33 Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 266:

34 Մուլյան Մ., Թիֆլիս քաղաքը իմ մանկութան ժամանակ, ՀԱԳ, ֆ. 428, ց. 2, գ. 104, ք. 19:

35 Ասրատյան Մ., Памятники средневековой архитектуры в Тбилиси, II международный симпозиум по армянскому искусству, том 2, Ереван, 1978, с. 399.




Եկեղեցու մաքրման աշխատանքները 2012 թ. հունվար-փետրվար ամիսներին (լուս.՝ Ն. Ակոպովի)




Հնարավոր փլուզումներից խուսափելու նպատակով եկեղեցու ներսում 2012 թ. մարտ-ապրիլ ամսին տեղադրված մետաղական և փայտե հենակները (լուս.՝ Ա. Հակոբյանի)

նաև ժան Շարդենը: Նրա ճարտարապետության մեջ նկատելի են ուշ շրջանի նորոգումներ»³⁶:

Մբ. Նշան եկեղեցին ունի ԺԷ-ԺԸ դարերում հայ եկեղեցաշինության մեջ լայն տարածում գտած գմբեթավոր եռանավ բազիլիկի հորինվածք: Մրածայր վեղարով ավարտող արտաքուստ 12 նիստանի թմբուկը և թաղերը ներքուստ պահում



0 1 2 3 4 5 10 մ



Երկրորդ հարկի
ականդատան հատակագիծ

Մբ. Նշան եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Գալոբյանի, 2007 թ.)

են երկու գույգ հաստահեղույս սյուները: Մբ. Նիկողայոսի անվամբ օծված, արևելքում կիսաբլուրակ եզրագծով ավագ խորանից բացված են դեպի ներս լայնացող երեք լուսամուտներ: Անդրեսա առաքյալի և Մբ. Գևորգի անուններով օծված հյուսիսային և հարավային խորաններով ավանդատների մուտքերը բացված են արևմտյան կողմերից՝ աղոթասրահի մեջ:

Ավանդատները կրկնահարկ են: Երկրորդ հարկում մուտքերը բացված են խորանի մեջ և նրա հետ հաղորդակցվում են 17-ական աստիճանների միջոցով:



Գաղափարներ Մբ. Նշան եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 և 2012 թթ.)

³⁶ Կոնստանդին Թ., մույն տեղում:




Սբ. Նշան եկեղեցու գմբեթը ներքուստ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)

Հիմնական շինանյութն աղյուսն է: Գործածված է նաև քար (հատկապես հիմնաշարում, քիվերում, մուտքերի անկյուններում): Ծածկերը կղմինդրապատ են: Ներքին ծավալներն ամբողջությամբ պատված են եղել որմնանկարներով, որոնց մի նշանակալի մասը ենթադրաբար վերագրվում է Հովնաթանյան դպրոցի նկարիչներին: Երեք մուտքերը բացված են հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներից: Արևմտյան ճակտոնի գագաթին ունի ութ սյուների վրա կանգնած զանգակատուն, իսկ հյուսիսային մուտքի առջև՝ քառասյուն նախամուտք: Ի դեպ, վերջինիս վրա նույնպես եղել է զանգակատուն, որը հավանաբար քանդվել է (կամ քանդել

են) խորհրդային առաջին տասնամյակներին: Որմերը հարուստ են հայերեն վիմագրերով: Արտաքին չափերն են (առանց հյուսիսից կից նախասրահի)՝ 29.45 x 14.60 մ:

Կալվածքներ. Տփղիսի Սբ. Նշան եկեղեցին ունեցել է ժամանակի ընթացքում նվիրաբերված որոշակի հասութաբեր անշարժ կալվածքներ: Դրանցից ստացված եկամուտը հատկացվում էր եկեղեցու սպասավորների և կից գործող ծխական դպրոցի նյութական կարիքները հոգալու համար:

Չանագան կարգի նվիրատվություններից հայտնի են հետևյալները.



Եկեղեցու հյուսիսային նախամուտքի տեսքը հյուսիս-արևմուտքից, արևմուտքից և պատկերաքանդակներ (լու.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)



Եկեղեցու հյուսիսային մասամուտքի տեսքը հյուսիս-արևմուտքից, արևմուտքից և պատկերաքանդակներ (լու.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)



Սբ. Նշան եկեղեցու հյուսիսային մուտքի առջև կառուցված նախամուտքն իսպառ քանդված հորդ անձրևներից հետո՝ մայիսի 14-ի գիշերը (լուս.՝ Ն. Ակոպովի, 2012 թ., 14 մայիսի)

1824 թ. վանեցի Գասպար Բարսեղյանի կազմած կտակի համաձայն, ի քիվս քաղաքի հայկական 17 եկեղեցիների, նաև Ս. Նշանին մվիրաբերվում է 10 ռուբլի արծաթ դրամ, և մեկ ռուբլի՝ եկեղեցու ժամկոչին³⁷:

1838 թ. եկեղեցու սեփականությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը. «Եկեղեցին սբ. Նշանի կառուցեալ բարձրագոյն պարսպաւ հանդերձ, ի շրջակայս իր ունի դատարկ տեղի հազար հարիւր տասն և վեց գազ գազանդարի: Մերձ գանգակատան սենեակք երկու, մինն թափուր վասն քահանայից, և երկրորդին բնակի ժամկոչն ձրի: Տուն ճորտ Գիքոյ

Յունանովի այրի Լալուն մեկ արու, երկու էգք, ոչինչ հատուցանեն եկեղեցոյն: Տուն ճորտ Պասլի որդի Կարապետն, Մային, Քեթեվան և սա ևս ոչինչ հատուցանե՛»³⁸:

1843 թ. եկեղեցու սեփականությունը համարվող ճորտ բնակիչներից ստացված եկամուտը կազմում էր 210 ռուբլի³⁹:

1898 թ. պետական խորհրդական Գրիգոր Սոլոմոնյան Արխալոմյանցը քաղաքի 5-րդ մասում գտնվող 5000 ռուբլի գնահատվող եկամտաբեր սեփական կրպակը մվիրում է եկեղեցուն⁴⁰:

38 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 61:

39 ՀԱԳ, ֆ. 56, ց. 4, գ. 787, թ. 75, 145:

40 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 363, թ. 1:

37 Մատենադարան, քրթ. 155, վավ. 68:

Ներքինիսներ. հայտնի է, որ 1868 թ. Սր. Նշան եկեղեցու պատգամավորներ են ընտրվել աստիճանավոր Ալեքսանդր Թալիբյանցը, Գրիգոր Շանշյանցը և Սողոմոն Վարձելյանցը⁴¹:

1872 թ. Ներսիսյան դպրոցի նոր հոգաբարձուների ընտրության համար Սր. Նշան եկեղեցուց պատգամավորներ են ընտրվում պետական խորհրդական Ալեքսանդր Ղազարյան Թալիբյանցը, կոլեգիական քարտուղար Հակոբ Գևորգյան Ավթանդիլյանցը, Տփղիսի քաղաքացի Գրիգոր Հարությունյան Ղանդուբայանցը⁴²:

1884 թ. հունվարի 29-ին Սր. Նշան եկեղեցու պատգամավորներ են ընտրվում Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Բարսեղ Ղանդուբայանցը, Գաբրիել Միրզոյանը, Նիկողայոս Տեր-Հարությունյանը⁴³:

1885 թ. հունվարի 10-ին Սր. Նշան եկեղեցու քեմական պատգամավորներ են ընտրվում Հովհաննես Տեր-Կարապետյանը, Գևորգ Էնակոյուրյանցը, Հակոբ Տեր-Հակոբյանցը⁴⁴:

1891 թ. ապրիլի 7-ին Սր. Նշան եկեղեցու համար պատգամավոր են ընտրվում Հակոբ Տեր-Հովհաննիսյանցը, Մուրադ Մելիք-Աղամյանցը, Գրիգոր Էնիկոյուրյանցը⁴⁵:

1892 թ. հունվարի 26-ին Սր. Նշան եկեղեցու երեսփոխանորդներ են ընտրվում Հովհաննես Տեր-Կարապետյանը, Բարսեղ Ղանդուբայանը, Գաբրիել Միրզոյանը⁴⁶:

1914 թ. Սր. Նշան եկեղեցուց պատվիրակներ են ընտրվում Հ. Համբարձումյանը, Ս. Խանդալամյանը, անձնափոխանորդներ՝ Բ. Ամիրաղյանը, Ս. Խաչիկյանը⁴⁷:

Քահանաներ. 1646⁴⁸ և 1656⁴⁹ թթ. հիշվում է տեր Օհան քահանան:

1789 թ. հոկտեմբերին կաթողիկոսական շնորհակալագրում հիշվում է «...սուրբ Նշան եկեղեցույ միաբան տեր Գրիգորն...»⁵⁰:

1837 թ. հիշվում է Հովհաննես Չառափյանցը (Չառափով)⁵¹:

1881 թ. հոկտեմբերի 24-ից մինչև առնվազն 1914 թ. եկեղեցում սպասավորել է քահանա Գրիգոր Հովհաննիսյան Շեր-

մազանյանցը (ծնվ. 1851 թ., ձեռն. 1881 թ.), իսկ 1887 թ. հուլիսի 27-ից մինչև առնվազն 1914 թ.՝ Գարեգին քահանա Մարկոսյան Առաքելյանցը (ծնվ. 1857 թ., ձեռն. 1887 թ.)⁵²:

1888 թ. քահանա է հիշվում Առաքել Հակոբյան Աղիզյանցը⁵³:

Սր. Նշան եկեղեցու արական դպրոց. բացվել է Ներսես Աշտարակեցու՝ 1848 թ. հունիսի 2-ի կոնդակ-հրամանի համաձայն⁵⁴:

1861 թ. սկզբին Սր. Նշան եկեղեցու դպրոցը քաղաքի հայկական եկեղեցիներին կից գործող 6 դպրոցներից մեկն էր (դպրոցներ ունեին նաև Մուղնու, Բերդի, Սր. Սարգիս. Սր. Մինաս և Շամքորեցոց եկեղեցիները)⁵⁵:

Գպրոցն ընդամենը 18 աշակերտով գործում էր նաև 1873 և 1875 թվականներին⁵⁶:

Կրթօջախի անմխիթար վիճակի մասին 1875 թ. նշվել է. «...պատահեցաւ մեզ լինելու սուրբ Նշան եկեղեցում և տեսնել այնտեղի ուսումնարանի ողորմելի վիճակը: Ուսումնարանումը վաղուց է դասատուութիւն չկայ, տունը ատերակ է դարձել և ուսումնարանական պարագայքը քայքայած եւ կոտրատուած ընկած են»⁵⁷:

1875 թ. ապրիլին հիշվում են ուսումնարանի հոգաբարձուներ տեր Ղևոնդ Խարազյանցը և Գ. Աբիմյանցը⁵⁸:

1876 թ. սկզբին գործում էր Հարություն վարժապետ Շահնագարյանի ղեկավարությամբ. «Թիֆլիզում մի այդպիսի ուսումնարան ունենալ միանգամայն մախատինք է մեզ համար: ...մի փոքրիկ կեղտոտ սենեակ, առանց վառարանի, կտորրտած ապակիների փոխարէն թղթով զոցած պատուհաններով, այն ևս միայն կեսը, և մեզ պարզ կը լինի խեղճ մանուկների դրութիւնը, մանաւանդ ...ձմեռուայ սաստիկ ցրտերին...»⁵⁹:

Սր. Նշան եկեղեցու տիրացուական դպրոց. մանուկների կրթությունը ծայրահեղ ընկած վիճակում թողնելով՝ 1876 թ. հոգևորականությունը եկեղեցուն կից բացում է նոր դպրոց տիրացուների համար. «...հրամանաւ Նորին Բարձր Սրբագնութեան Գաբրիել Արքեպիսկոպոսի բացուել է մի առանձին ուսումնարան տիրացուաց համար Սուրբ Նշան եկեղեցու

41 «Մեղու Հայաստանի», 1868, № 12, 23 մարտի, էջ 84-85:

42 «Մեղու Հայաստանի», 1872, № 30, 23 սեպտեմբերի, էջ 120:

43 «Արձագանք», 1884, № 5, 5 փետրուարի, էջ 68:

44 «Մեղու Հայաստանի», 1885, № 18, 7 մարտի, էջ 3-4:

45 «Արձագանք», 1891, № 6, 19 ապրիլի, էջ 82:

46 «Արձագանք», 1892, № 12, 29 յունուարի (10 փետրուարի), էջ 2:

47 «Հորիզոն», 1914, № 113, 28 մայիսի, էջ 2:

48 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 39, ք. 57:

49 ԺԷԳ, էջ 721:

50 Դիվան հայոց պատմության, գիրք առաջին, հ. Բ, Երևան, 2003, էջ 497:

51 Մելիքսեթ-Քել Լ., նշվ. աշխ., էջ 266:

52 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 1020, ք. 221-222: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 795, ք. 53 և գ. 331, ք. 74:

53 «Արձագանք», 1888, № 31, 14 օգոստոսի, էջ 421:

54 **Խոսրոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 593:

55 «Մեղու Հայաստանի», 1861, № 14, 1 ապրիլի, էջ 108:

56 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 593:

57 «Մեղու Հայաստանի», 1875, № 14, 12 ապրիլի, էջ 2:

58 Նույն տեղում:

59 «Մեղու Հայաստանի», 1876, № 5, 7 փետրվարի, էջ 3:

բազումն: Ուսումնարանում ուսանում են մօտ քառասուն տի-
բազում»⁶⁰:

Սբ. Նշան եկեղեցու իգական դպրոց. հակառակ 1873 թ.
վերաբերող մի հաղորդման, համաձայն որի՝ նշյալ թվականին
«Սուրբ Նշանի մօտ դիրեկցիայի թոյլտուրեամբ օրիորդաց
դպրոց բացած է արժանաչարգ տիկին Տեր-Գրիգորեանցը»⁶¹,
այնուամենայնիվ, այս դպրոցը Հայուհյաց բարեգործական ըն-
կերության կողմից բացված է համարվում 1883 թ., որը հաջորդ՝
1884 թ. ունեցել է 200 սան⁶²:

1884 թ. ընկերության վարչությունը ստանում է ընդհանուր
ժողովի համաձայնությունն ընկերության գումարից 2000 ռ.
«գործ դնել ս. Նշան եկեղեցույ գաւթում մի դպրոցական շինու-
թիւն կառուցանելու համար և Սրբազան առաջնորդի հրամա-
նաւ ստացել էր այդ գործի համար ս. Նշան եկեղեցուց 2000 ռ.
և մասնաւոր հանգանակութեամբ ժողոված 160 ռ., սակայն
նա իսկոյն ձեռնամուխ չէ եղած այդ գործին և միայն ներկայ
տարուայ փետրվարին սկսել է փորել տալ շինութեան հիմքը:
Վարչութիւնը մտադիր է ապագայում իրագործել այդ նպա-
տակը, իսկ այժմ որոշել է միայն հիմք ձգել և մի թեթև պատ
կանգնեցնել այդ տեղում»⁶³:

1885 թ. Հայուհյաց բարեգործական ընկերությունը շնոր-
հակալություն է հայտնում բժշկապետ Դավիթ Օրբելուն, որը
ձրիաբար շաբաթը մեկ անգամ այցելում է Սբ. Նշան եկեղեցու
դպրոց և խորհուրդներ տալիս առողջապահության մասին⁶⁴:

Նույն թվականին 30 սան ունեցող դպրոցին Նիկողայոս
Մեղվինյանը և Մարկոս Դուրխանյանը նվիրում են «Աղբիւր»
ամսագրի տարվա լրակազմը⁶⁵:

1887 թ. օրիորդաց միդասյա դպրոցում դասավանդում էին
օր. Նունե Փրիդոնյանը (ռուսաց լեզու) և Մակար Վարդիկյա-
նը (երգեցողություն)⁶⁶:

1888 թ. նշվել է. «...ուսումնարանը, որ գտնվում է սուրբ
Նշան եկեղեցու գաւթումը: Ուսումնարանի շէնքը շատ յար-
մար է, դասատները, գաւիթը այնպէս մաքուր, որ ամենա-
խիստ առողջապահական պահանջներին կարող է համապա-
տասխանել...: Տիկնանց մասնաժողովը, ինչպէս երևում է, մեծ
ուշադրութիւն է դարձնում աշակերտուհիների ձեռագործի վե-
րայ, որպէս զի կարողանայ միջոց տալ չքատուր օրիորդներին
իրենց ձեռքի աշխատանքով հայթայթել թէ իրանց և թէ ծնո-

ղաց ապրուստը: Ընկերութեան այս նպատակին հասնելու մե-
ծապէս նպաստում է օր. Բ. Չոհրաբեանը...»⁶⁷:

1888 թ. մայիսի 29-ին «Ս. Նշան եկեղեցու գաւթում
գտնուող Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ուսում-
նարանի պարզաբաշխութեան հանդէսն էր: ...Դպրոցի վար-
ժուի օր. Չոհրաբեան կարդաց տարեկան հաշիւը և աւար-
տող աշակերտուհիների անուններն՝ ամեն մէկին յանձնելով
վկայական և մի-մի հատ աւետարան...»⁶⁸:

1888 թ. սեպտեմբերի 21-ին «...կայացաւ Սուրբ Նշանի օ-
րիորդական ուսումնարանի երկրորդ բաժնի բացումը, յանուն
Հայոց Բարեգործական Ընկերութեան: Բացմանը ներկայ էին
հոգաբարձուհիներ, յիշեալ բարեգործական անդամները, այդ
ուսումնարանի աշակերտուհիք և վերջինի ծնօղները: Այդ
դպրոցը գտնվում է Մերգիեվսկի փողոցի վերայ-Շահապարու-
նեանի տանը: Նորաբաց ուսումնարանում ընդունվում են այն
աշակերտուհիները, որոնք վերջացրել են վերոյիշեալ ուսումնա-
րանի առաջին բաժանմունքը: Ներկայումս այդ ուսումնարա-
նում, որ բաղկացած է երեք բաժանմունքից, ընդունվել են 41 օ-
րիորդ, որոնցից 27 կողմնակի, իսկ մնացեալ 14 վերջացրել են
իրանց ուսումը այս տարի Հայ. Ընկերութեան դպրոցում...»⁶⁹:

1888 թ. հոկտեմբերի 10-ին դպրոց է այցելում Մակար Ա
Թեղուսցի կաթողիկոսը. «Նորին Վեհափառութիւնը բարեհա-
ճեց այցելել Ս. Նշան եկեղեցույ դպրոցը, որ գտնվում է Հայու-
հեաց Բարեգործական Ընկերութեան հովանաւորութեան
ներքոյ և կառավարվում է այդ ընկերութեան միջոցներով:
Դպրոցի պատշգամբի վերայ շարուած էին Ընկերութեան
վարչութեան անդամները, փոխանդամները և դպրոցի ու-
սուցչուհիները: Թեմիս Առաջնորդ Գերապատի Արիստակէս
Սրբազան եպիսկոպոսը, որ միևնոյն ժամանակ Ընկերութեան
պատուաւոր Նախագահն է, ներկայացրեց Նորին Օծութեան
Ընկերութեան վարչութեան աստեանապետուհուն՝ իշխանուհի
Կատերինե Բեհրութեանին, որ իւր կողմիցն էլ ներկայացրեց
Վարչութեան անդամներին, փոխանդամներին և դպրոցի
աւագ վարժուհոյն և վարժուհիներին: Նորին Օծութիւնը
մուտք գործեց դպրոցի դահլիճը, ուր արդէն շարուած էին
դպրոցի աշակերտուհիները և երգում էին «Բարէ» երգը: Եր-
գից յետոյ դպրոցի աւագ վարժուի օրիորդ Վարվառէ Չոհ-
րաբեանը բաղդ ունեցաւ ներկայացնել Նորին Օծութեան
դպրոցում աւարտող աշակերտուհեաց, որոնք այժմ Ընկերու-
թիւնից առանձին հիմնուած կար ու ձևի դպրոցում շարունա-
կում են իրանց ուսումը...»⁷⁰:

60 **Երգնկանց Գ.**, Նորաբաց ուսումնարան տիրացուաց համար Թիֆլիսում,
«Մեղու Հայաստանի», 1876, № 40, 16 հոկտեմբերի, էջ 3:

61 «Մեղու Հայաստանի», 1873, № 9, 10 մարտի, էջ 3:

62 «Արձագանք», 1884, № 10, 11 մարտի, էջ 143:

63 «Մեղու Հայաստանի», 1885, № 29, հինգշաբթի, 18 ապրիլի, էջ 3:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

66 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 8, ք. 22:

67 «Արձագանք», 1888, № 10, 20 մարտի, էջ 125:

68 «Արձագանք», 1888, № 21, 5 յունիսի, էջ 293:

69 «Արձագանք», 1888, № 37, 27 սեպտեմբերի, էջ 506:

70 «Արձագանք», 1888, № 40, 16 հոկտեմբերի, էջ 544:

1891 թ. Հայուհյաց բարեգործական ընկերությունը Սբ. Նշան եկեղեցու դպրոցին է հատկացնում 2506 ռ.⁷¹:

Նույն թվականին նաև նշվել է, որ «Ընկերությունը իր հաշուով պահում է սուրբ Նշան եկեղեցույ ծխական դպրոցը և կարուճկի ուսումնարանը»⁷²:

1892 թ. ապրիլին վախճանված քիֆլիսեցի Վարվառե Խուդադյանի ամուսինը՝ Հովհաննես Խուդադյանը, կնոջ հիշատակին 100 ռ. է նվիրում օրիորդաց դպրոցին⁷³:

Սբ. Նշան եկեղեցու օրիորդաց միդասյա դպրոցը 1891/1892 ուստարում ունեցել է 6 ուսուցիչ (Հովհաննես սարկավագ Նազարյանց, ավագ ուսուցչուհի Նունե Փրիդունյանց, Գալուստ Աբուլյանց, Աղեքսանդր Միմեռնյանց, Մարիամ Մալումյանց, Սրբուհի Սուսանյանց)⁷⁴:

1896 թ. դպրոցը կառավարության հրամանով փակվելու նախօրեին եղել է երկդասյա՝ 5 բաժանմունքով⁷⁵:

1907/1908 ուստարվանից գործում էր Քամոյանց եկեղեցու դպրոցի հետ միացյալ⁷⁶:

1911 թ. երկդասյա 5-ամյա հաստատություն էր⁷⁷:

Հիվանդանոց. 1873-1874 թթ. գործել է Ս. Նշան եկեղեցու մոտ՝ Յագոր Ղարաջյանի տանը⁷⁸:

Գերեզմանոց. գլխավորապես տարածվում էր եկեղեցու հյուսիսային, մասամբ նաև արևմտյան կողմում: 1970-ական թվականներին հյուսիսային հատվածում գտնվող տապանաքարերի մեծ մասն ասֆալտապատվել է: Տեսանելի են մնացել միայն սակավաթիվ այն տապանաքարերը, որոնց հնարավոր չէր եղել ասֆալտապատել փոքր-ինչ բարձր լինելու պատճառով:

Տապանաքարերից զատ՝ գերեզմանոցում եղել են նաև մահարձաններ, որոնցից մեզ են հասել Ավետիք Փիրոյանի (1858 թ.) և Բարսեղ Մեղվինյանցի (1894 թ.) հուշարձանները: Այստեղ են ամփոփվել Արիստոտելյանց, Բեգաբեկյանց, Մեղվինյանց, Փիրոյանց տոհմերի հանգուցյալները: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

1. 1743 թ. եկեղեցու հյուսիսային մուտքի առջև՝ քառասյուն զանգակատուն-նախասրահի ներքո, ամփոփվել է եկեղեցու բարեգարդությանը «բազում աշխատանոք» նպաստած հոգևորականներից մեկը: Վերից վար տապանաքարի աջ հատ-

վածն ամբողջությամբ հողմահարված է, որի պատճառով էլ 11 տողանոց արձանագրությունից հասկացվում է միայն հետևյալը.

Այս է տապան... / ավար էրէց տ(է)ր... / իսա, որ եկեղեց... / ց բազում աշ[խատ]անօք ջանաց ... / ...ք ձեռ... / աջ ի տապանիս... / ց թէ աշխարքին ... / աջ, օվ կարդա [ասի ողոր]մի հանգեա ի տ(է)ր ... / Ռ-ՃՂԸ (1743):

Հրատ. **Муральян П.**, նշվ. աշխ., էջ 71:

Ծանոթ. ներկայացվում է փոքր-ինչ լրացված վերձանությունը:



Հատված Սբ. Նշան եկեղեցու հյուսիսային մուտքի առջև կառուցված նախամուտքի ներքո գտնվող բաղումներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)

71 «Արձագանք», 1891, № 7, 28 ապրիլի, էջ 102:

72 «Արձագանք», 1891, № 5, էջ 69:

73 «Արձագանք», 1892, № 44, 15 (27) ապրիլի, էջ 1:

74 ՀԱԳ, ֆ. 56, ց. 15, գ. 26, ք. 24:



75 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 594:

76 Նույն տեղում:

77 Նույն տեղում:

78 «Մշակ», 1873, № 21, էջ 4: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1874, № 21,

1 յունիսի, էջ 4:



საყანაგარ, 1743 პ.

2. 1788 პ. ხელნეგი არსაბუჯან მითუქი ათუჯ ანჷფიქად სოქსან ჩხუქარქუანგჷ თაყანაგარჷნ მჷან ქრავერენოქ (თაყანაგარჷნ თეღო მ ზეღ მჷნგ 1980-ასკან ჟჷ. სკერენერ) არბანაგერქად ზ ზეღ.

საქართველოს მეფის ირაკლის ვიცე-კანცლერ <მღ>ივანი თავადი სულხან ბეგთაბეგოვი აღ(ვ)ესრულე აგვისტოს ქა უოკ, წე(ლ)სა ჩღკც.


ფარგ. წრავ ჳერაქლ ჟაგაქორჷ ქოქსანგერ, მჷქამ, ჟაქაღ სოქსან ჩხუქარქუანგჷ ხანგაქ ქრინქინჷ 476 იგუსთოქინ:

ჳრათ. Меликсет-Беков Л., Усыпальница кн. Бегтабеговых, Тифлис, 1914, с. 4: Мурадян П., გქ. აქჷ., ზე 71:

3. ზრქეღქქან (ხაქერენ` 5 თოღ ჸ ქრავერენ` 7 თოღ) არბანაგეროქჷმ არბარს საქქერ, ჸსთ ამნსანჷ, კეროქლ ზ 1855 პ. ჳარქჷა არსაბუჯანგჷ ხჷსათსკჷნ იროქ` სოღონჷ ჳანქეროქ.

...კათოღა ჸ 18... | ...1855 ამჷ არღანარჷ ... | ...სოღონჷ არსოღოქ... | ... (ქჷსათსკ) ბნოღავ ჸროგ ჳარა(რჷსაჷ ჸ) ჳოქანაჷ:

აქ... (მოქ)ღაქედ ეოვოღსა | აბესალომოვო ზაქარო-აღ [სბოღოღ]სა | სახლოთ სახელოთ მეფეთაგან ცნობოღსა | სპარსთაგან მეღვოთ უნსპარს განსაჯლომოღსა |



მიოხეთ ღმერთან თქვენს ლოცვათ მინდობილსა | მხოღველოთ ვოხოვოთ შემობრლოთ და შენდობა | მიბრბანოთ ღ(მრ)თის გულისათვის, | 1831. 9. 12.

ფარგ. ... სოქარაქ ჳარაქ არსაბოქმქ` არქანერჷნ ხაქონჷ თოქმჷგ, აქარსკნერჷ კოქმჷგ მახქან იათაქაროქამ(ღ): ჳხეგერქ ჸნბ, ჟანჷ იო ჸს ხოქს იღოქმ ჸნ ბერ` ათ სათქამ იოქლამ აოქქერჷ ქრავ:

ჳრათ. Мурадян П., გქ. აქჷ., ზე 113-114:

ბანოქ. თაყანაგარჷ მნაგოქოქმერ (ერქო რქოქო) სქ. ჴან ხელნეგი კერქანაგოქჷ ქოქსაოქლამ ჸნ ზეღ ჳქქჷსაჷ აათამაგაგარქან ჟან-გარან, იოთეღ ზ 1980-ასკან ჟჷ. სკერენერჷნ თსთე ზ იქ. ჳ. სოქოქანერ: ჸოსანსკარე მნე ზ თრამარქეღ ს. ᳕არქქანერ:

4. 1858 პ. სქ. ჴან ხელნეგი ხოქსაჷსაჷნ იოქმჷნ კჷგ კეროქლ ჸ თასქაქმ აქსაქანქომ ზ აქსაქ სოქსაჷსან ჳოქოქანგჷ მახარბანერ` კჷგ ენოქარბას ხჷსათსკაგოქ: ჳანგოქსაქლ «ქოსკა მოქრქეღ ზ სერსჷსან იაქოქგჷნ მჷ ხოქსკაქ ჳინოქმ, იოქ აროქინერე გოქმ ზ იოქომ იოქოს



նոյն դպրոցի»⁷⁹: Արիեստով մուշտակագործ (քյուրքչի) էր: 1820 թ. ընտրվում է Սբ. Նշան եկեղեցու երեցփոխ. «Էս պաշտօն մտնելու ժամանակն եկեղեցին ոչինչ գումար չունէր, բայց նա իր հաւատարիմ ծառայութեամբն բազմացրեց գումարն եկեղեցոյ, կանանց դասն նոր ի նորոյ հիմքից շինեց, եկեղեցին վերանորոգեց, և վերջապէս էս պաշտօնս կատարելով 28 տարի մեծ արդարութեամբ և հաւատարմութեամբ թողեց եկեղեցոյ համար հինգ հազար մանէթ մայր գումար, և եկեղեցին զարդարելու համար իր յիշատակ մինչև 600 մանէթ ընծայեց»⁸⁰:


Ա. Փիրոյանը վախճանվում է 1858 թ. մայիսի 8-ին և քաղվում «ի պարսալի սուրբ Նշան եկեղեցոյ»⁸¹: Նույն թվականի սեպտեմբերի 10-ին վախճանվում է նաև կինը՝ Քեթևանը, որին ամփոփում են ամուսնու կողքին: Հանգուցյալ ամուսինների հիշատակը հավերժացնում է Ա. Փիրոյանի մահարձանին կից (եկեղեցու հյուսիսային որմնի մեջ) ագուցված մարմարե սալկին 28 տողով փորագրված արձանագրութիւնը.

*Առ դու ընդ քն տապան գերութեան
 Չմարմին անշունչ առն պատուական,
 Աղայ Աւետիքի ըստ հօր Մովսիսեան,
 Իսկ ըստ տոհմանուան կոչեալ Փիրոյեան.
 Եկաց սա յերկրի գործովք բարութեան,
 Ի մանկուց տիոց ցօր իւր ծերութեան,
 Որքոց հայր էր սա, նեղելոց պաշտպան,
 Աղքատաց օգնել էր սորա միշտ ջան,
 Քաղաքացի էր՝ յառ և տուրս արդար,
 Իւրոց, օտարաց յաւերժ բարերար.*

79 «Մեղու Հայաստանի», 1875, № 13, 5 ապրիլի, էջ 3:

80 «Մեղու Հայաստանի», 1859, № 24, 13 յունիսի, էջ 192:

81 Նույն տեղում:



*Չամս եռեսուն զտյն զայս տաճար
 Չարդարեալ հասոյց ի փառաց կատար,
 Էր սա անժառանգ, բայց բազմաժառանգ.
 Մանկունք դպրոցի են սորա ժառանգ.
 Չարդիւնս կրպակաց և իւրոց մեծ տան
 Կտակեալ նոցա մշտնջենական,
 Ծանօթք, անծանօթք ընթերցող բանիս,
 Ուսարուք և դուք գործել զբարիս.
 Մաղթեցէք զտէր ջերմեռանդ սրտիս
 Տալ հոգոյ սորա զաներեկն զտիս,*



Վախճանեալ յ8 մայիսի
1858 ամի, ի հասակի

64 ամաց,

Համեստ գործովք առն
պատուական՝

Առ նմին ննջէ իւր կին Քե-
րևան.

Չամս քառասուն կացեալ
միաբան՝

Ի տոյն իսկ ամի թաղի յայս
տապան,

Վախճանեալ ի 10 սեպ.

1858 ամի, ի հասակի

55 ամաց:

Հրատ. **Мурдян П.**, նշվ. աշխ., էջ

72:

Ծանոթ. հրատարակիչը Փիրոյեան
տոհմանունը սխալմամբ ընթերցել է
Փիրոյեան:



5. 1874 թ. գերեզմանոցում է ամփոփվել Շուշան Քեթխուդ-
յանց-Արեսալոմյանցը (քաղաքագլուխ Սողոմոն Արեսալոմ-
յանցի մայրը)⁸²: Նրա տապանաքարին զետեղված սպիտակ
մարմարե սալիկին 10 տողանոց արդեն կիսաեղծ արձանա-
գրությունից ընթերցվում է.

Ընդ շիրմասու հանգչի ...արուն բարեպաշտուհի ամուսին
Չաքարայ Արեսալոմեն(ա)նցի | հանգուցե(ա)լ Շուշան,
դուստր՝ Դաիթի | Քեթխուդէնց, որ կնքեաց զկեանս իւր ... |
ամի ..., ով հանդիպօղբ շիրմին աղաչէ՛մ զձեզ տալ սմա ողոր-
մի ... | ... արասցէ տ(ե)ր հոգւո ...տոյրին պսակակից ... եթող ընդ
արդարս իւր | ... | ...:

Հրատ. առաջին անգամ:


6. 1868 թ. գերեզմանոցում է ամփոփվել 1860-1861 և 1865-
1866 թթ. Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը վարած Սողոմոն
Չաքարյան Արեսալոմյանցը (Արիստողոմյանցը)⁸³:

7. 1880 թ. գերեզմանոցում ամփոփվել է փոխգնդապետ
Ավրիան Միքայելյան Ենիկոլոպյանցը⁸⁴:

⁸² Շուշան Քեթխուդյանց-Արեսալոմյանցը հիշատակված է նաև 1855 թ. հա-
վանաբար ամուսնու՝ Չաքարիա Արեսալոմյանցի հիշատակին կերտված
տապանագրում (տե՛ս տապանագիր № 3):

⁸³ «Кавказ», 1868, 07. 21. Կենսագրական մանրամասները տե՛ս մեր՝
«Թիֆլիսի քաղաքագլուխները» գրքում (Երևան, 2003, էջ 52-53): Տապա-
նաքարը տեղում պահպանված տեսանելի արձանագիր քարերի թվում չէ:

⁸⁴ ՎԱԲ, ֆ. 5, ց. 1, գ. 6469, ք. 62: Տապանաքարը տեղում չէ:





8. 1892 թ. եկեղեցու հյուսիսային մուտքի առջև՝ քառասյուն զանգակատուն-նախասարահի ներքո, ամփոփվել է Հակոբ Արեստլոյանցը: Նրա տապանաքարին հայերենով և ռուսերենով արձանագրված է.

Յակովբ Արեստլոյանց / Արեստլոյանց, / Яковъ Соломоновичъ / Абессаломовъ / 1823-1892 զ.

Հրատ. առաջին անգամ:

9. 1894 թ. գերեզմանոցում ամփոփվում է Տիգրիսում բելգիական փոխհյուպատոս, հանքաբան Բարսեղ Հովհաննիսյան Մեղվինյանը⁸⁵: Նրա մահարձանը, որը վերջին տարիներին

դին միտումնավոր վնասվել է, գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում տարածված գերեզմանոցի հյուսիսային եզրին՝ կից շրջապարսպին:

Василий Ивановичъ / Мегвиновъ / род. 5 ноября 1843 զ. / сконч. 31 декабря 1894 զ.

Բարսեղ Յովհաննիսյան / Մեղվինյանց, / ծնեալ ի 5-ն նոյեմբերի 1843 ամի, / վախճանեալ յ31 դեկտեմբերի 1894 ամի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուսանկարները՝ մահարձանը կանգուն վիճակում (1989 թ., Ս. Կարապետյան) և միտումնավոր ավերելուց հետո (2008 թ., Ս. Դարչինյան):



10. 1915 թ. եկեղեցու արևմտյան ճակատին կից ամփոփվում է արքունի խորհրդական իշխան Գրիգոր Բեկթաբեկյանցը: Նրա տապանաքարը, որն անհետացվել է 2010-2011 թթ. միջակայքում, ուներ եռալեզու (հայերեն, ռուսերեն և վրացերեն) արձանագրություն.

Աստ հանգչի մարմին նաղվորնի սովեդնիկ / կն. իշխան Գրիգորի Ռոստոմեան / Բեգթաբեգեանց / նախկին հոգաբարձու Թիֆլիսի հայոց / Ջկրաշէն եկեղեցու ուսումնարանի / ծն. 29 յունիսի 1838 թ. վախճ. 5 փետրուարի 1915 թ.:

Надворный советникъ / попечитель Джиграшенской школы / князь Григорий Ростомовичъ / Бектабеговъ / род. 29 июня 1838 զ., сконч. 5 февраля 1915 զ.

Նաջտորնո Նոջեթեոյոս / յնոաՅո ջրօջտորն Թոսեթո-ժոջո... / Եջեթօժեջոջո / յՅոջեթեթեջոջո ... յՅոջեթեթեթեթոս ... / 1838-1915.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. լուսանկարը՝ Ս. Դարչինյանի, 1988 թ.:

Ի դեպ, հավանաբար այս գերեզմանոցից է եկեղեցու հարավային ավանդատուն փոխադրվել անարձանագիր, սակայն ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների ԺԷ-ԺԸ դարերով թվագրվող գեղաքանդակ մի խաչքար:

Եկեղեցական իրեր. Եկեղեցում կամ նրա սպասավորների մոտ գտնված մասունքների գոյության մասին հայտնի առաջին տեղեկություններից մեկը 1837 թ.-ից է. «Այստեղ կա բազ-

85 “Тифлисский листок”, 1895, № 1, 02.01.



Խաչքար (ԺԷ-ԺԸ դդ.) Սբ. Նշան եկեղեցու հարավային ավանդատան ներսում (ուս.՝ Ն. Ակոպովի, 2011 թ.)

մամասն պատկեր սուրբ Նիկողայոսի, հույժ սքանչելագործ, որի մեջ ամփոփված է Անդրեաս առաքյալի ճակատը: Բացի սրանից, այս եկեղեցու ավագերեց Օհաննես Չարափովն իր տանը պահում է ինչպես կենարար փայտը, նույնպես և այլ սրբոց մասունքները, որ նրա նախնիները ժառանգաբար թողել են նրան, և որը շատերին բուժում է. սրանք պաշտելի են ինչպես հայերից, նույնպես և վրացիներից, իսկ հին ժամանակները թագավորական տնից ևս պաշտված են եղել: (Այս քահանան) երբեմն փոխադրում է այն իր տնից եկեղեցի, որպեսզի քրիստոնյաները պաշտեն և համբուրեն այն, ու կրկին իր տունը վերադարձնում»⁸⁶:

86 Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., էջ 267: Ի դեպ, 1775 թ. նույն Օհաննես Չարափովի ընտանիքի ծախսերով էր կառուցվել նաև Մետեխի բերդի մեծ դռան դիմացի եկեղեցին. «...փոքր ժամ գմբեթավոր, հանուն սուրբ Գեորգի, որ ծածկված է փայտով և շինված է Սուրբ Նշանի ավագերեց տեր-Օհաննես Չարափովի ընտանիքի (ծախսով) 1775 թվին» (նշվ. աշխ., էջ 268):

Համաձայն 1838 թ. մարտի 8-ին կազմված տեղեկագրի՝ Սբ. Նշան եկեղեցուն պատկանում էին 168 միավոր ոսկյա և արծաթե իրեր⁸⁷: Դրանց մի որոշ մասն ուներ ընծայագիր, որոնք էլ ներկայացնում ենք ստորև.

«Խաչ պարանոցի արծաթ ոսկեգոծ: Ի մի երեսն հինգ սուտ ակունք, և ի միս երեսն գրեալ».

Ի թուին հայոց ՌՂԵ (1646) շինեցաւ սուրբ Նշանս բարեխոս Յոհան վարդապետին և ծնողաց նորին՝ Մէլքոյին և Սիւնունդին:

«Կշիռն երեսուն և մի մսխալ»:

«Չոյգ խաչք միմեանց համանմանք երկկուղի, բայց պատուանդանին խնծորք սոցա ի ձև վեցթև սրովբէին, յօրինեալ և պատուանդանն առանց ոսկեջրի: Ի միոյն վերայ գրեալ յիշատակն հայերէն».

Յանուն Բաղդասարին, Բէժանի դուստր Դէդէրոյին, որդոյ Կակայոյին..., ՌճԺԱ (1662) թուին:

«...ի միոյսոյն վերայ գրեալ վրաց տառիւք ի հայ բարբառ».

Յանուն Փէրիխանին, Մարիամին...:

«Խաչ գոյգ, համանմանք միակուղի, միանն ոսկեգոծ և միսն ոչ: Երկուքն ևս բեկեալ. միոյն վերայ գրեալ լոկ Տէր Գրիգոր վրացէրէն և ի միսոյն վերայ».

Յանուն քահանայից Բաղդասարին և պարոն Դաթին և մօր Խորեշանին, եղբօրն Յարութիւնին:

«Խաչ բոլորակ ոսկեգոծ, մէջն աղաւնակերպ արծաթ, ի բոլորակին գրեալ».

Յիշատակ յանուն Բաղդենի դուստր Թուրազին..., ՌճԿԴ (1715):

«Պատկեր սրբոյն Մինասայ, ի ներքին կողմն արծաթապատ դրամքք և պատկերաւ Հօր Աստուծոյ պատկերն և սրբոյն, միայն է ոսկեգոծ, յիշատակն գրեալ յանուն Յօքիմեանց Ռոստոմի որդի Հոքիմին... ՌճԿԴ (1715) թուին»:

«Չոյգ խաչ համանման միմեանց երկկուղի ոսկեգոծ բաց ի պատուանդանէն, յորոյ ի մի երեսն խաչելութիւն ձուլածու ի քառաթևս պատկերք կուսից և պատեալք շուրջանակի գլխովք հրեշտակաց ի քառանկիւնս ևս երկուստք գլուխք հրեշտակաց մի մի, ի միս երեսն պատկեր տիրամօր թագակիր Յիսուս ի գիրկն, ի գլուխ խաչին միոյ ունի տեղի ինչ պակասեալ արծաթոյ խնծորոյ պատուանդանին թագածև. յօրինեալ երկոստասան փոքր պատկերօք առաքելոց, յորոց ներքոյ գրեալ է».

Յիշատակն յանուն մղոսի Մէսրովբին և կողակցոյն և որդոյն Խաչատուրին..., ՌճԿԶ (1717) թուին:

«...ի միոյսոյն վերայ գրեալ նոյնաձև».

Յանուն Շատինեանց Բաղդասարին, իւր կողակցոյն... «...ի նոյն թուոջ. կշիռ երկուց խաչիցն երկու հարիւր քառասուն և հինգ մսխալ:

87 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, ք. 56-61:

«Սկիի արծաթի իր մաղզմանաւ սկեգօժ, բաց յաւազանէն ի նոյն ձև որպէս ի վերն, բայց փոքր ինչ գանազան, ի ներքոյ գրեալ».

Յիշատակ յանուն Մանգոյին և իւր կողակցոյն և իւր որդի Գիորգիին հոգոյ համայ... ՌՃԿԷ (1718):

«Պատկեր Աետեաց սկեգօժ, մէջն կոյսն սք. և հրեշտակացն առաջի ծաղիկ ի ձեռն, ի վեր չօր Աստուծոյ և իջման հոգոյն սրբոյ աղանակերպ, եզերքն վեց աստի և վեց անտի պատկերք երկոտասան առաքելոց, ի վեր որոց երկու երկրն հրեշտակք մի մի, ի ներքոյ պատկերին գրեալ».

Յիշատակ յանուն Օբօյենց Ռոստոմի որդի Հոռիմին, Ասլամազին, Բէժանին... ՌՃՀԵ (1726):

«Սկիի արծաթի, անմաղզման, սկեգօժ, բաց յաւազանէն ենք որոյ է ազոյց չօրութքմայ մնամութեամբք երկրն հրեշտակաց, պատուանդանն ևս հնաշէն, գեղեցկամն հօրինեալ և ի տեղիս տեղիս պատկերօք, յեզր պատուանդանին գրեալ».

Յանուն Էգենց Բէժանին և իւր որդի Ստեփանին, Մարտիրոսին և իւր ծնողացն... ՌՃՀԹ (1730) բոլին:

«Պահարան արծաթապատ ի տեղիս տեղիս սկեգօժ, մէջն խաչանն տեղիք թողեալ արթուն արթուն, յոր բազմեալ են փայտն կենաց սք., ի թառն ի վեր կոյս սք. մասն Յակովբայ եղբօր տեառն, յափշտակեալ տեղն երկի գրուածովք, ի միս թառն Յուաննու Մկրտչին, Դուկասու աւետարանչին, Լուսաւորչին, և Ոսկեբերանին, յերեքն ապաքեալ ծածկեալ: Ի գլուխ պահարանին արծաթի սկեգօժ կաթողիկէ, ձեռաչափ դրոմք, ի ներքուստ արծաթապատ հրեշտակակերպ, նոյնպէս իւրաքանչիւրքն կաթողիկաւոր, բայց քարձ սկեգօրի գրեալ յիշատակն ի վերա դրանց».

Յանուն Աւետիքի որդի Ախտարխանին և ծնողացն և եղբարցն... ՌՃՂԲ (1743) բոլին:

«Պատկեր փոքր Աստուածամորն սկիապատ, վեց մանր ակունք գմբուխտ և եաղութ, ի գլխաղիքսն յիշատակն գրեալ».

Յանուն Մէհրաբի հայր Ենօրին... ՌՄԻԲ (1773) բոլին:

«Պատկեր արծաթի, ի մէջ պահարանի Յոհաննու Մկրտչի և Ստեփաննոսի նախավկային, որոց մատունքն սք. բազմեալ կան ի միջի, երեսն ապակեալ ծածկեալ, ի դրունս տրա ի ներքուստ՝ արծաթ պատկերք Պետրոսի և Պողոսի, յիշատակն գրեալ յանուն Քերթվանին, ի վայելումն տէր Մկրտչին, ՌՄԼԲ (1783)»:

«Ատենի ժամագիրք՝ տպեալ ի սք. Էջմիածին ՌՄԼԳ (1785) ամի»:

«Չոյզ պատկերք համանմանք միմեանց, արծաթապատ, որոց երկայնութիւն է երկու քիլ, միաթև իւրաքանչիւրքն: Յիշատակն գրեալ յանուն Մամլօյեանց Եսայու որդի Ռոստոմին և կողակից Լալիթարսին... ՌՄԼԶ (1787)»:

«Սկիի կարի մէծ, սկեգօժ իւր մաղզմանաւ, ռուսիաշէն: Ի մաղզմանին խաչ է».

Միրզայ Գուրգէնին և Միսայէլին ... ՌՄԼԸ (1789) բոլին:

«Պատկեր նոյնանման և արծաթովք».

Յիշատակն Մանգոյեանց Յոհան և իւր կողակից Թամարին, ՌՄԽԵ (1796):

«Պատկեր Աստուածամորն արծաթապատ, սկեգօժ, գլխաղիքն սուս ակամբք զարդարեալ, յիշատակն գրեալ».

Յանուն Դաւիթ Մանանովին, ՌՄԾԵ (1806) ամի:

«Փորուրար դեղին կարմիր ատլաս կարովի սկեթելիք և գոյնգոյն երանգոք, մէջն ծառ, յոստոցն վերա երկոտասան նահապետաց պատկեր, ի ծայրն տիրամօր՝ Յիսուս ի գիրկն, ենք ծառոյն նահապետին Յակովբի նրնջման, ի վերա լանջաց երկու պատկերք սրբոց, յորոց ներքոյ գրեալ».

Յիշատակ յանուն հանգուցեալ Գրգորիդ, Փարսադանի որդի Չուրաբին և իւր կողակից՝ Քերթվանին... 1809 ամի, ի 26 սեպտեմբերի:

«Խաչ արծաթի մեծ, որոյ երկայնութիւն է հինգ մատնաչափ և երեք կանգնոյ հաւասար ձեռնին, յորոց մի երեսն մէջն խաչելութիւն ի քառաթև նորա պատկերք աւետարանչաց նշանօք իրեանց, և այլ նմանութիւնք երկրն հրեշտակաց, պատկերքն են սկեգօժ ի ներքոյ խաչին չօրութքմայ գործիք չարչարանաց, ի միս երեսն մէջն պատկեր տիրամօր սկեգօժ, ի քառաթևան վեցրն հրեշտակք մի մի ի գլուխ կուսին թագ, յոսին ներքոյ գրեալ վրացերէն և հայերէն».

Յիշատակ յանուն Դաւիթ Շանչիճովին և իւր ծնողացն 1810 բոլին:

«Պատուանդանն միացեալ ընդ խաչին գչերսու, յորոց վերայ երեք խմորք են երկուքն՝ միաչափ, միոյն վերայ գրեալ հանգուցեալ կենակցոյն Բարբարէին և կենդանոյն Քալօլին, դստերն Սօփին: Միջին խմբարն է սաղաւարտանն յօրինեալ ի չափ զագաթան մարդոյ երկոտասան առաքելոց պատկերօք, բայց փրկչականն, որ ի միջի է սկեգօժ ... արծաթ խաչին պատուանդանն մածեալ էր խաչին վասն և խնծողքն պատուանդանաւ էր լի միւրովք մնաց անկշռելի»:

«Պահարան փոքր, երկայնութիւն միոյ քլոյ, ի ներքուստ արծաթապատ, մէջն մասն նշխարիաց սրբոյն Գէորգայ, գրեալ շուրջանակի և երեսն ապակեալ ծածկեալ և կից նմին գրեալ յիշատակ սք. Գէորգին նշխարիս Մինաս Միմանովիչին, իւր Մարգարիտ, Անանի, Աննայ և որդոցն իւրեանց բոլին ՌՄԾԹ (1810), և պատկեր ևս ի նմա չօր Աստուծոյ և երկրն հրեշտակաց, դրունքն արծաթապատ ներքուստ և արտաքուստ, միոյն վերա ի ներքուստ սրբոյն Գէորգայ և միսին հրեշտակին, արտաքուստ սրբոյն Պետրոսի և Պողոսի: Կշիռն յիսուն և հինգ մսխալ»:

«Փորուրար դեղին սեալ մախմուր կարովի սկեթելիք, մէջն խաչք, միւրքն ծաղիկք, ենք խաչիցն գրեալ».

1823, յիշատակ է Ալադաթովի դուստր Ովսանին:

«Շուրջառ ռուսաց, սպիտակաշարն դեղին, գոր դիպակ նոր, ընտիր և գեղեցիկ, արծաթի չափռաստիցն վերայ գրեալ».

Յիշատակ յանուն Պետրոս Սարգսեանին և ծնողացն նորին... յամի 1825, ի սեպտեմբեր 5:

«Ձոյգ քոյց ի ձև վեցքև սրովբէլից շուրջանակի ճաճանչ, յորս են արծաթի պոժոժիք, յիւրաքանչիւրում վեց վեց, ի ծայրսն խաչք, գչերաւ հաստատեալ պատուանդանն միացեալ է ընդ քոյցին, որոյ երկայնութիւն է թգաչափ, ընծայեալ ի Խարազեանց յերկուց եղբարց հանգուցեալ Յարութիւնէ և Աւետիսէ, 1828 ամի»:

«Աւետարան ճաշու, նոր և գեղեցկագարդ, տեղն կարմիր մախմուր, տպեալ ի Պէտէրբուրգ 1786 ամի տեառն: Մի երեսն մինաքար պատկերք, մէջն յարութեան և այլ տեղիս անտարանչաց շուրջանակի սիբիրաքարիւք զարդարեալ, և եզերքն արծաթ բոլորակ ոսկեգօծ, ի միւս երեսն պատկերք արծաթ ոսկեգօծ, մէջն յարութիւն ճաճանչատր և այլքն անտարանչաց, եզերքն բոլոր են արծաթապատ, և երկփեղկ, ի վերա ընծայեալ յազմիւ Ղայր-մազ Ղայրմազեանցէ, գորմէ գրեալ կայ ի միջի 1831 ամի, օգոստոսի ԺԵ (15):

«Ժաշվատ արծաթի, ոսկեգօծ իւր խաչի հանդերձ: Ընծայեալ ի Բէժո-յեանց Գալուստէ 1831 ամի»:

«Շուրջառ դիպաք դեղին-կանաչ, դեղնաշար և ծաղկախայտ պայծառ և նոր, չափաատքն արծաթիք, կապուտ մինաքար երեսն, յորոյ վերա գրեալ է»:

Յիշատակ յանուն Յոհաննէս Սուլթանովին և ծնողացն նորին, 1834:

«Պահարան ամենայնիւք համանման նմին, բայց մէջն եղեալ գագաթան սրբոյն Անդրէի առաքելոյն, երեսն ապակեաւ ծածկեալ, յիշատակն դրանց վերայ գրեալ»:

Յանուն Խաչատուրի որդի Պապին և իւր կողակից Թամարին... ՌՄՂԲ (1843):

«Սկիի արծաթի իւր մաղզմանաւ, մէջ առգանին ոսկեգօծ, պատուան-դանն չօքուրթմայ, յեզր որոյ գրեալ վրացէրէն»:

Յանուն Սողադեանց Բայնդուրի որդի Եսային...

«Ժաչք բեկեալք արծաթք միակուղի համանման միմեանց, բայց փոքր-ինչ տարբերք, միոյն յիշատակն Փոլադեանց Գաբրիէլին և ծնողացն, կողակ-ցոյն Մարիամին, երկրորդին՝ Ղօրդանեանց Դօղօյին, որդի Գաբրիէլին, իսկ երրորդն՝ մորսի Աւետիքեանց Խատինին, որոց կշիռն է ութսուն և ութն»:

«Մեռոնաշիշ արծաթի՝ գմբէթածն փոքր խաչի, պատուանդանն միա-ցեալ գչերաւ, ի ներքոյ ազուցեալ ունի պղինձ ընդ չափու պատուանդանին, որով և կշռեցաւ, ենք որոյ էին արուրք երեք ոտն, յիշատակն գրեալ վրացէրէն՝ յանուն Շամիրի Բէգլարեանց»:

«Աւետարան արծաթապատ, ոսկեգօծ գեղեցկաշէն, յորոյ մի երեսն է ձու-լածու խաչելութիւն, ի քառանկիւն անտարանիչք և երկթև հրեշտակք մի մի, ի միւս երեսն մէջն պատկեր փրկչակամ ձուլածու, միւս պատկերքն նոյնք են միափեղկ, հաւասար գրոյն, յորս են չորս պատկերք անտարանչաց և նմա-նութիւնք հրեշտակաց մի մի: Ի վեր և ի վայր քամակն ևս արծաթապատ, որոյ մի եզր պակասեալ է արծաթն, յիշատակն գրեալ ի վերա»:

Յանուն Օբօյեանց Բէժոյին և եղբայր Նատիլտին և իւր ընկեր գորցի Նատիլտին:

«Գրչեայ էր անտարանն, կշիռ լոկ արծաթոյն հարիւր ութսուն և երկու մախալ»:

«Պատկեր Աստուածածնի զոյգ, արծաթապատ, համանմանք իրերաց, գլխադիրքն միայն ոսկեգօծ և վանք մի սուտ ակունք ի վերա եզերքս, բոլորու-վին արծաթապատ, ի ներքոյ իւրաքանչիւրոց գրեալ յիշատակագիր յանուն առն միոյ, որ է ոսկերիչ Մաշօյի որդի Եսայուն, կողակից Բադինին, որդուցն՝ Տէտէբօյին, Նիկողոսին»:

«Պատկեր Աստուածածնի, արծաթապատ, գլխադիրքն միայն ոսկեգօծ, ի ստորև յարծաթոյն վերա գրեալ վրացէրէն ի հայ բարբառ՝ յիշատակ յանուն հանգուցեալ Յակովբին...»:

«Պատկեր սրբոյն Նիկողայոսի հայրապետին, մէջն ի վեր կոյս փրկչա-կան և տիրամօր պատկերք: Շուրջանակի զպատկերան սրբոյն, պատկերք նորին սքանչելագործութեանց, ընդ մէջուն արծաթագարդ և գրեալ ի վերա ճառսն իւրաքանչիւր պատկերին ընդ չափու պատկերոցն, գլխադիրքն յօրի-նեալ արծաթ ոսկեգօծ, ապաքի, միադուռն, որոյ եզերքն ոսկեգօծ արծաթ չօ-քուրթմայ երկմատնաչափ լայնութեամբ»:

Յիշատակ Դատիթ Մանանեանցի:

«Պատկեր Աստուածածնի, մեծ, Յիսուս ի գիրկն, որոյ գլխադիրքն միայն են արծաթիք, քանի մի սուտ ակունք, ի վերա յիշատակն գրեալ յանուն Ատո-մի դուստր Թամարին... յարծաթն յայլմէ է ընծայեալ»:

«Պատկեր Աստուածածնի, արծաթապատ և եզերքն չօքուրթմայ»:

Յիշատակ Գոգինեանց Թինաթինին:

«Պատկեր սրբոյ դաստառակի արծաթապատ, գլխադիրն ոսկեգօծ ճա-ճանչածն յօրինեալ և հինգ մինաքար նշանք սպիտակ և կապուտ, ընծայեալ ի Բէժօյեանց Գալուստէ և այլոյ նորա Բաբարէրէ: Կշիռն երկու հարիւր քսան և վեց մախալ ու կէս»:

«Ձոյգ արծաթի մոմակալ: Յիշատակն գրեալ յանուն Մեհրապի, հայր՝ Ենովքին»:

«Ձոյգ արծաթի մոմակալ համանման նմին, մեծ քան զայն»:

Յիշատակ Եսայի Իզմիրեանցի:

«Մոմակալ արծաթի զոյգ, գեղեցկաշէն: Ընծայեալ Աւետիս Բաբանա-սեանցէ»:

«Ձոյգ արծաթի մոմակալ, պատուանդանին ծայրն օձածն և ընծայեալ ի Յարութիւն Խարազեանցէ»:

«Մաղավարք արծաթապատ, տեղն կարմիր մախմուր, ի ծայրն խաչ ար-ծաթի սիբիրաքարիւք զարդարուն, ի ներքոյ պատուանդանին ճաճանչածն արծաթ, յորոյ վերայ գրեալ է»:

Յիշատակ է խաչս Աղամջանեանց հանգուցեալ Գօգինի կին Սաթոյին:

«Վակաս արծաթի, ոսկեգօծ չօքուրթմայ տեղն սուսանի մախմուր, մէջն եօթն պատկեր արծաթի. մինն փրկչական, երկրորդն տիրամօր, երրորդն՝ Յուհաննու Մկրտչի և այլքն անտարանչաց, ընդ մէջ պատկերացն գոտիք արծաթեայք ի լայնութիւն միոյ մատին, յերկարութիւն ևս միոյ մատին, զոյնգզոյն սուտ ակամբք զարդարեալ: Ի վեր և ի վար կոյս վակասին, եզերքն

հաւասար նմին, նոյն չափ արծաթով և գոյնզգոյն սուտ ակամբք յօրինեալ, յոտին ներքոյ փրկչական ի սմին եղեալ պատկերին գրեալ վրացերէն՝ յիշատակ յանուն Սամ Շանշինեանցին»:

«Շուրջառ ռուսաց, գոր փարչոյ ծաղկաւետ ընծայեալ Յօբօյեանց Աւթանդիլէ վասն հոգոյ եղբօր իւրոյ: Բայց արծաթի չափոստքն այլոց ուրոք է, որոյ անունն գրեալ կայ ի վերայ՝ յիշատակ է Խանդալամի որդի Գաթին...»:

«Շուրջառ դեղին ծիրանի, դեղնաշար, փարչայ ռուսաց: Ընծայեալ ի Միրզայ Աբրահամ Էնակոլփեանցէ»:

«Զոյգ բագբանք, մինն կարովի ոսկէթելիւք, գրեալ յիշատակն յանուն Աղամջանի որդի հանգուցեալ Գիորգի դուստր Թամարին և կողակից հանգուցեալ Յոհաննէսին...»:

«Զոյգ արծաթի մոմակալ: Յիշատակն գրեալ յանուն Մեհրապի հայր Ենովքին»:

«Աւետարանք, մինն ատենի՝ տպեալ ի Կոստանդնուպոլիս 1796 ամի, միւսն ճաշու՝ տպեալ ի Պետերբուրգ 1786 ամի և երրորդն գրչեայ»:

«Այսմատրք, մինն տպեալ ի Կոստանդնուպոլիս ՌՆ (1651) թուին՝ յիշատակ Օթօեանց Բէժանին իւրայնովք հանդերձ, երկրորդ՝ Ամիրադեանց Դուքիասաւարին և միւսն գրչեայ»:

Ամփոփում

Արդեն մի քանի տարի է, ինչ արժարժվում է Վրաստանում գտնվող և դեռևս 1920-1930-ական թթ.-ից ի վեր իշխանությունների կողմից բռնագրավված հայկական մի քանի եկեղեցիներն իրենց օրինական և միակ տիրոջը՝ Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի թեմին վերադարձնելու խնդիրը:

Առայժմ վերադարձման պահանջ է ներկայացվել Վրաստանում գտնվող հայկական բազմաթիվ եկեղեցիներից միայն 6-ի նկատմամբ, որոնց թվում է Թբիլիսիի Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցին:

Ցարդ հայկական կողմի խնդրանքը չի բավարարվել ոչ այնքան պետական, որքան Վրաց ուղղափառ եկեղեցու որդեգրած մոտեցումների պատճառով: Գործի էությունն այն է, որ կասկածի տակ է դրվել եկեղեցին ի սկզբանե հայաշեն և հայապատկան լինելու իրողությունը, և առաջ է քաշվել այն տեսակետը, թե իբր եկեղեցին հայերը կառուցել են ավելի վաղ ժամանակներից տեղում գոյություն ունեցած վրացական ուղղափառ եկեղեցու հիմքերի վրա, որով էլ իբր յուրացվել է այն:

Անշուշտ, Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի թեմի պահանջը միանգամայն որոշակի և հստակ է: Այն վերաբերում է 1703-1720 թթ. կառուցված և մինչև 1930 թ. որպես հայ առաքելական եկեղեցի գործած ցարդ կանգուն Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցուն: Սույն պահանջի բավարարմանը, սակայն, դեմ է Վրաց ուղղափառ եկեղեցին, որն իր մերժումը մինչև հիմա, ցավոք, հիմնավորել է ոչ թե սկզբնաղբյուրային հավաստիություն ունեցող պատմական արժանահավատ

վկայություններով, այլ սոսկ մերկապարանոց անհիմն հայտարարություններով՝ նշելով, թե իբր ներկայիս եկեղեցին կառուցվել է ավելի հին՝ վրացական ուղղափառ եկեղեցու տեղում:

Առնվազն տարակուսանք է առաջացնում, որ առանց համապատասխան պատմագիտական նյութերը քննելու և առավել ևս նույնիսկ առանց այդ նյութերին զոնե հպանցիկ ծանոթ լինելու նույնական մոտեցումներ են դրսևորել պատմաբանասիրական ոլորտի վրացագգի մի շարք ներկայացուցիչներ:

Այս վերջինը հաստատում է, որ թե՛ Վրաց ուղղափառ եկեղեցու հոգևորականությունը և թե՛ նրա շահերից ելույթ ունեցող որոշ հետազոտողներ իրենց հրապարակումներում առաջնորդվում են ոչ թե գիտական անաչառ տրամաբանությամբ, այլ սոսկ քաղաքական շահերով:

Ստեղծված իրավիճակում եկեղեցու պատմական անցյալը վերհանելը, մանրագնին քննելը, այն գիտական և հանրության լայն շրջանակներին ամբողջական, ճշմարիտ և անաչառ ներկայացնելը վերածվել են հույժ կարևոր խնդրի:

Հուսով ենք, որ սույն ուսումնասիրությունը, որտեղ ներկայացված են Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցու՝ ի մի բերված և նորովի քննության ենթարկված պատմությանն առնչվող ցարդ հայտնի և նորահայտ սկզբնաղբյուրային բոլոր տեղեկությունները, նոր լույս կսփռի և սպառնիչ պատասխան կտա արդեն երկար ժամանակ չարչրկվող և շահարկվող խնդրին: